ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1946, № 10 *Общественные науки*

Ս. Ներսիսյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ 1860—1880 Թ. Թ.

Քաղաքական այն իրադրությունը, որ ստեղծվեց Հայաստանում 19-րդ դարի առաջին երեք տասնամյակներում տեղի ունեցած ռուս-պարսկական և ռուս-թյուրքական պատերազմներից հետո, էական փոփոխություններ չկրեց հաջորդ տասնամյակներում և հիմնականում պահպանվեց նաև մեզ այստեղ հետաքրքրող ժամանակաշրջանում՝ 1860—1880-ական թվականներին։ Հայաստանի արևելյան և հյուսիսային գավառները, կամ, ինչպես սովորաբար ընդունված է անվանել, Արևելյան Հայաստանը, շարունակեց մնալ ռուսական կայսրության սահմանների մեջ, իսկ արևմտյան և հարավային գավառները՝ Արևմտյան Հայաստանը՝ թյուրք-սուլթանական տիրապետության տակ։ Ղրիմի պատերազմը չբերեց նոր փոփոխություն։ Միայն 1877—1878 թվականների ռուս-թյուրքական պատերազմի հետևանքով թյուրքական տիրապետությունից ազատվեց Կարսը և միացվեց Ռուսաստանին։

Արևելյան Հայաստանը, ինչպես և ամբողջ Անդրկովկասը, տասնամյակներ մնայուն վարչական բաժանման ենթարկվեց 1846—1849 թվականներին, Կովկասի առաջին փոխարքա իշխան Միխայիլ Սեմենովիչ Վորոնցովի ժամանակ։ Այդ տարիներին, ինչպես հայտնի է, ցարական կառավարությունն Անդրկովկասում ստեղծեց հինգ նահանգներ՝ Թիֆլիսի, Քութայիսի, Շամախու, Դերբենդի և Երևանի։ Երևանի նահանգը, որ բաժանվեց Երևանի, Նախիջևանի, Ալեքսանդրոպոլի, Նոր-Բայազետի և Օրդուբադի գավառների, իր մեջ ընդգրկեց Արևելյան Հայաստանի կենտրոնական և մեծ մասը։ Արևելյան Հայաստանի հյուսիսային շրջաններից Զալալ-Օղլին, Ախալքալաքին մտան Թիֆլիսի նահանգի մեջ, իսկ Ադրբեջանին սահմանակից մի քանի շրջաններ՝ Զանգեզուր, Ղազախ, Շամշադին՝ Ելիզավետպոլի (Գանձակի) նահանգի մեջ։ 1877 Թ. նոյեմբերի 1-ին ցարական կառավարությունը Կարսի և նրա մերձակա այն շրջաններից, որոնք մինչ այդ կազմում էին Էրզրումի վիլայեթի երկու՝ Կարսի և Զըլդիրի սանջակները, ստեղծեց վարչական մի առանձին միավոր՝ Կարսի մարզ, որ հետագայում բաժանվեց չորս գավառների՝ Կարսի, Արդահանի, Կաղզվանի և Օլթու։[1] Անդրկովկասի և մասնավորապես Արևելյան Հայաստանի վարչական այս

[1] *В. Н. Иваненко.* Гражданское управление Закавказья, Тифлис, 1901, էջ *376. 1860 Թ. Շամախու նահանգի փոխարեն կազմվեց Բաքվի նահանգը։ Նույն թվականի վերջերից ստեղծվեց Դերբենդի, իսկ 1868 թվին՝ Ելիզավետպոլի (Գանձակի) նահանգը* (*С. Эсадзе.* Историческая записка об управлении Кавказом, т. II. Тифлис, 1907, *էջ 45*).

[2] Сборник материалов по русско-турецкой войне 1877—1878 гг. на Кавказско-Малоазиатском театре, вып. 1, Спб., 1903, *էջ 112*.

բաժանումը հիմնականում անփոփոխ մնաց 19-րդ դարի ամբողջ երկրորդ կեսի ընթացքում։

Արևմտյան Հայաստանը, ինչպես և ամբողջ Թյուրքիան, որ մոտ երկու դար շարունակ վարչականորեն բաժանված էր փաշայությունների, 1856 թվականի բարենորոգումների՝ Խաթ-Հյումայունի սկզբունքներից բխող 1864 թվականի օրենքի համաձայն, ենթարկվեց նոր բաժանման։ Փաշայությունների փոխարեն ստեղծվեցին վիլայեթներ։ 1870-ական թվականների վերջերին Արևմտյան Հայաստանի տերիտորիան ընդգրկված էր վեց վիլայեթների՝ Վանի, Էրզրումի, Բիթլիսի, Սվազի, Դիարբեքիրի և Խարբերդի մեջ։[1] Հայկական Կիլիկիան բաժանված էր Հալեպի և Ադանայի վիլայեթների մեջ։

Մեզ այստեղ հետաքրքրող շրջանում Անդրկովկասի հայ բնակչությունը կենտրոնացած էր գլխավորապես Երևանի, Ելիզավետպոլի (Գանձակի), Թիֆլիսի, Բաքվի նահանգներում և Կարսի մարզում։ Պաշտոնական տվյալների համաձայն, 1886 թվականին Երևանի նահանգի բնակչության թիվը եղել է 670.405, որից հայ՝ 375.700, Ելիզավետպոլի նահանգինը՝ 728.943, որից հայ՝ 258.324, Թիֆլիսի նահանգինը՝ 808.143, որից հայ՝ 193.610, Բաքվի նահանգինը՝ 712.703, որից հայ՝ 55.459, Կարսի մարզինը՝ 174.044, որից հայ՝ 33.094։ Ամբողջ Անդրկովկասի հայ բնակչության թիվը 1865 թվականին եղել է 540.931 (Անդրկովկասի ամբողջ բնակչության թիվն էր 3.115.164 մարդ).[4] 1874 թվականին՝ 711.960[5] 1886 թվականին՝ 939.131 (Անդրկով-

---

[1] 19-րդ դարի առաջին կեսին Արևմտյան Հայաստանի տերիտորիան ընդգրկված էր Կարսի, Էրզրումի (Կարինի), Բայազետի, Վանի, Մուշի և մասամբ Դիարբեքիրի ու Սվազի փաշայությունների մեջ։ Հիշված բոլոր փաշայությունները մտնում էին Էրզրումի սերասքերության (փոխարքայության) մեջ և վարչականորեն ենթարկվում էին նրան (տես Պ. Բազիլյան—«Աշխարհագրությունից մասանց աշխարհի», մաս 1-ին, Վենետիկ, 1806 թ. История военных действий в Азиатской Турции в 1828 и 1829 годах, часть 1-я, Спб., 1836. էջ 70. 17-րդ դարի երկրորդ կեսի աղբյուրներում հիշված են Դիարբեքիրի, Սվազի, Էրզրումի, Վանի, Զրեղրի, Մարաշի, Տրապիզոնի և Կարսի փաշայությունները (տես Ricaut. Histoire de l'etat present de l'Empire Ottoman. Paris, 1670. էջ 161.

[2] Արևմտյան Հայաստանի վարչական բաժանումը հաճախ փոփոխվում էր։ 1880 թվականին գոյություն ունեցող հնգանյալ վիլայեթները. Էրզրումի, Մեմուրեթ-ուլ Ազիզի (Նոր-Մալաթիա, Ազիզյան, Արաբկիր և այլն), Դերսիմի, Բիթլիսի, Վանի, Հնջյուրի, Դիարբեքիրի, Սվազի, իսկ 1886 թ. Բիթլիսի, Վանի, Էրզրումի, Դիարբեքիրի, Մեմուրեթ-ուլ Ազիզի և Հնջյուրի (Ջուլամերիկ, Բաշկալա և այլն) վիլայեթները (տես՝ А. И. Гиппиус, Статистические таблицы вилаетов Турецкой империи, ближайших к Закавказью. Тифлис, 1889, էջ 6. 11—14).

[3] Свод статистических данных о населении Закавказского края, извлеченных из посемейных списков 1886 г. Издан по распоряжению Главноначальств. Гражд. частью на Кавказе Закавказским Статистическим комитетом. Тифлис, 1893 г. Այս աղբյուրի էջերը չեն նշանակված։ Մի այլ աղբյուրի տվյալներով՝ Կարսի մարզի բնակչության ընդհանուր թիվը 1882 թվականին եղել է 151 720, որից հայ՝ 31.518 (տես „Карс", 1883, № 7).

[4] Сборник статистических сведений о Кавказе, изд. Кавказским отделом имп. Русского географич. о-ва, том I. Сост. и изд. под рез. действ. члена Отдела Н. И. Воронова. Тифлис, 1869, II отд., էջ 20—21.

[5] Сборник сведений о Кавказе на основании камерального описания 1871—1874 г.г., т. VII, Тифлис, 1881.

կասի ամբողջ բնակչության թիվն էր 4.702.898 մարդ),[1] 1897 թվականին՝ 1.086.980 մարդ։ 1881 թվականի ավյալներով ռուսական կայսրության մեջ ապրող հայերի թիվը կազմում էր Անդրկովկասում 820.753, Հյուսիսային Կովկասում՝ 39.700, կայսրության մնացած մասերում՝ 56.536 մարդ։[2]

Արևմտյան Հայաստանի և ընդհանրապես Թյուրքիայի տիրապետության տակ ապրող հայ բնակչության թվի մասին մենք չունենք ճշգրիտ տեղեկություններ։ Սուլթանական կառավարությունը ոչ միայն մտահոգված չէր դրանով, այլև ամեն կերպ աշխատում էր, քաղաքական հասկանալի պատճառներով, գաղտնիքի աշխարհում պահել իրական ավյալները։ Թյուրքական պաշտոնական շրջանները մի քանի անգամ հրատարակեցին թվական տվյալներ, բայց դրանք խիստ աղավաղված և սխալ էին։ Համեմատաբար հավաստի տեղեկություններ տվել է Կ. Պոլսի հայ պատրիարքարանը, որը 1882 թվին տվյալներ հրապարակեց Թյուրքիայում ապրող հայ բնակչության թվի վերաբերյալ։ Այդ տվյալների համաձայն՝ Թյուրքական տիրապետության տակ գտնվող հայերի ընդհանուր թիվը կազմում էր 2.660.000 մարդ, ընդորում Վանի վիլայեթում՝ 400.000, Սվազի վիլայեթում՝ 280.000, Խարբերդի վիլայեթում՝ 270.000, Բիթլիսի վիլայեթում՝ 250.000, Դիարբեքիրի վիլայեթում՝ 150.000, Էրզրումի վիլայեթում՝ 280.000, Կիլիկիայում (Ադանայի և Հալեպի վիլայեթներ)՝ 380.000, Ասիական Թյուրքիայի մնացած մասերում՝ 455.000, Եվրոպական Թյուրքիայում՝ 195.000։[3]

Նույն շրջանում՝ 1880-ական թվականների սկզբներին Ռոլեն Ժակմենը

---

[1] Свод статистических данных о населении Закавказского края...

[2] Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г. Спб., 1905. տես՝ Անդրկովկասին վերաբերող 1—8 հատորների ազյուսակները։ 1897 թվականի մարդահամարի ավյալները սխալ մեկնաբանելու հետևանքով «Մուրճ»-ի աշխատակիցը Անդրկովկասի հայ բնակչության թիվը հաշվում էր 1.300.000 (տես «Մուրճ», 1905 թ. № 5, էջ 112)։ Սխալ է նաև Ա. Ն. Սազոնովը, որը Անդրկովկասի հայ բնակչության թիվը 1896 թվականին հաշվում էր 985.460 (տես՝ Братская помощь армянам. 2-е изд., М. 1898, էջ 234)։

[3] Ա. Երիզյան, «Ռուսիո Հայոց վիճակագրությունը (տես «Փորձ», 1881 թ. № 2)։

[4] «Արարատ», Էջմիածին, 1914 թ., № 9, էջ 808։ Եվրոպացի ուսումնասիրողների ավյալներով՝ 1840-ական թվականներին Թյուրքիայի տիրապետության տակ գտնվող հայերի թիվը կազմում էր 2.400.000, որից Եվրոպական Թյուրքիայում 400 000, իսկ Ասիական Թյուրքիայում՝ 2.000.000 (տես՝ Положение армян в Турции до вмешательства держав 1895 г., М. 1896, էջ 8)։ Կ. Մարքսը ևս 1854 թվականին գրած իր հոդվածներից մեկում Օսմանյան կայսրության մեջ եղած հայերի թիվը հաշվում էր 2.400.000 (*К. Маркс* и *Ф. Энгельс*. Сочинения, т. X, էջ 10)։ Մկրտիչ բեյ Դադյանը Թյուրքահպատակ հայերի թիվը 1870-ական թվականների սկզբներին հաշվում էր 3.400 000, որից 130.000 մարդ՝ Կ. Պոլսում (տես՝ *Мкртич бей Дадиан*, Армяне Оттоманской империи. Пер. с франц. Б. Тер-Акопова, Тифлис, 1878)։

Կ. Պոլսի հայ պատրիարք Ներսես Վարժապետյանի կողմից Բեռլինի կոնգրեսին ներկայացված հուշագրում Թյուրքահպատակ հայերի թիվը հաշվվում էր 3.000.000, որից 400.000-ը Եվրոպական Թյուրքիայում ու Կ. Պոլսում, 600.000-ը Փոքր Ասիայում և Կիլիկիայում, 670 000-ը Փոքր Հայքում (Սվազի վիլայեթ և Կեսարիայի սանջակ) և 1 300.000-ը Մեծ Հայքի Թյուրքական մասում (Էրզրումի, Վանի վիլայեթները, Դիարբեքիրի վիլայեթի հյուսիսային մասը, Արզահանի սանջակը և Աղերգի սանջակի հյուսիսային մասը)։ Տես «Ծրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանյան Հայաստանի», Կ. Պոլիս, 1878, էջ 30։

պարսկահայերի թիվը հաշվում էր 200.000-ից մինչև 225.000, Հնդկաստանում, Յավայում և Չինաստանում գտնվող հայերի թիվը՝ 40.000, Ավստրո-Հունգարիայում՝ 30.000, Արևելյան և Արևմտյան Եվրոպայում, Ամերիկայում և Աֆրիկայում՝ 97.000 մարդ։[1]

Տնտեսական զարգացման ինչ մակարդակի վրա էր գտնվում Հայաստանը մեզ այստեղ հետաքրքրող ժամանակաշրջանում։ Արևելյան Հայաստանը, ինչպես և Անդրկովկասի մյուս մասերը՝ Վրաստանն ու Ադրբեջանը 1860—1880-ական թվականներին ապրում էին ֆեոդալիզմի, հին նահապետական կյանքի քայքայման և կապիտալիստական հարաբերությունների ձևավորման շրջան։ Անդրկովկասյան ժողովուրդների պատմության այս էտապը փայլուն կերպով բնորոշել է Վ. Ի. Լենինը իր «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» հայտնի գրքում։ Լենինը գրում էր, որ 1870—1880-ական թվականներին արդեն Կովկասը ներգրավվեց համաշխարհային տարանքաշրջանառության մեջ. ավելի աճեցին շուկայական հարաբերությունները, ուժեղացավ երկրի բնատնտեսության քայքայման պրոցեսը, սկսեց կազմակերպվել արդյունաբերական կապիտալիզմը։ «Հետոեֆորմյան դարաշրջանում,—գրում էր Լենինը,—մի կողմից Կովկասը սաստիկ դաղութացման էր ենթարկվում... Մյուս կողմից՝ տեղի էր ունենում ընիկ դարավոր «տնայնագործական» արհեստագործությունների դուրսմղումը, որոնք Մոսկվայից ներմուծվող ֆաբրիկատների մրցման հետևանքով ընկնում էին։ Ընկնում էր գենքի հինավուրց արտադրությունը՝ Տուլայից և Բելգիայից ներմուծվող ապրանքների մրցման շնորհիվ, ընկնում էր երկաթի տնայնագործական մշակումը՝ ներմուծվող ռուսական արտադրանքի մրցման շնորհիվ, նմանապես ընկնում էր պղնձի, ոսկու և արծաթի, կավի, ճարպի, սողոյի, կաշիների տնայնագործական մշակումը և այլն։ Ռուսական կապիտալիզմը Կովկասը ներդրավում էր համաշխարհային ապրանքային շրջանառության մեջ, հավահարթում էր հինավուրց, նահապետական ինքնամփոփվածության ճնացորդ հանդիսացող նրա տեղական առանձնահատկությունները, իր գործարանների համար շուկա էր ստեղծում... Կովկասի ուժեղ գաղութացման պրոցեսին ու նրա հողագործական բնակչության արագ աճմանը զուգընթաց տեղի էր ունենում նաև բնակչության՝ հողագործությունից կտրվելու և արդյունաբերության մեջ քաշվելու պրոցեսը... Կովկասի քաղաքային բնակչությունը 1863 թվի 350.000-ից աճեց մինչև 900.000-ի 1897 թվին...»։[2]

Կապիտալիզմի զարգացման համար զգալի չափով նախադրյալներ ստեղծեցին մի կողմից՝ ագրարային-գյուղացիական ռեֆորմը Անդրկովկա-

[1] „Положение армян в Турции...", էջ 11։ Ֆրանսիացի գրող և հանրապարհորդ Մ. Ուրիչինին 1854 թվականին հայերի թիվը հաշվում էր Օսմանյան կայսրության մեջ՝ 2.400.000, Ռուսաստանում՝ 900.000, Պարսկաստանում՝ 600.000, Հնդկաստանի և Աֆրիկի այլ երկրներում՝ 40.000, Եվրոպայում՝ 60.000 («Արարատ», 1914 թ., № 2, հմմտ. «Արոր», 1913 թ., № 13)։ Վենետիկի Մխիթարյան միաբան Մ. Քալֆունին 1857 թ. հրատարակած իր աշխատություններից մեկում հայերի թիվը հաշվում էր Պարսկաստանում՝ 100.000, Եվրոպական Թյուրքիայում՝ 400.000, Ավստրիայում՝ 18.000, Աֆրիկայում և Հնդկաստանում՝ 10.000, Եվրոպայի այլ և այլ կողմերում՝ 1000 (տես Հ. Մ. վ. Քալֆունի, «Աշխարհագրություն հին և նոր Հայաստանեայց», Վենետիկ, 1857, էջ 230)։ Քալֆունու տվյալները խիստ թերի ու պակասավոր են։

[2] *В. И. Ленин.* Сочинения, изд. 3-е, т. III, էջ 463—464։

սում և մյուս կողմից՝ ճանապարհային շինարարությունը, որ կատարվեց 1860-1880-ական թվականներին։ Ագրարային-գյուղացիական ռեֆորմը, որը իրականացնող օրենքներն ընդունվեցին Վրաստանի համար 1864 թվականին, իսկ Հայաստանի և Ազրբեջանի համար 1870 թվականին, չնայած իր շատ թերություններին ու անհետևողականությանը, ուներ բուրժուական բովանդակություն և ստեղծում էր կապիտալիստական հարաբերությունների զարգացման համար մի շարք անհրաժեշտ նախադրյալներ։[1] Նույն իմաստով զգալի դեր խաղաց ցարական կառավարության կողմից ձեռնարկված ճանապարհային շինարարությունը։ Ինչպես հայտնի է, 1871—1872 թվականներին կառուցվեց Թիֆլիս—Ղարաքիլիսա—Երևան խճուղին, ապա Երևան—Ջուլֆա, Ղարաքիլիսա—Ալեքսանդրոպոլ, Ալեքսանդրոպոլ—Կոզր և Նախիջևան—Դորիս խճուղիները։[2] 1872 թվականին գործարկվեց Թիֆլիս—Փոթի երկաթգիծը, որն առաջինն էր Անդրկովկասում։ 1883 թվականին շահագործման հանձնվեց Բաքու—Բաթում գիծը, 1899 թվականին պատրաստ էր Թիֆլիս—Ալեքսանդրոպոլ—Կարս գիծը։[3]

Կապիտալիստական հարաբերությունների զարգացումը սկսվեց նախ և առաջ գյուղատնտեսության մեջ, որի հետևանքով և աշխուժացան ապրանքափոխանակային հարաբերությունները գյուղում, ուժեղացավ գյուղացիության քայքայման և շերտավորման պրոցեսը, լայն գործունեություն ծավալեց վաշխառուական կապիտալը, հրապարակ եկավ գյուղի հարուստ, ուռճացած շերտը և սկսեց աստիճանաբար իր ձեռքում կենտրոնացնել հողային ֆոնդը և իշխող դիրք գրավել գյուղում։[4] Գյուղական կյանքում առաջացած այս նոր երևույթների պատճառով գյուղացիության մի զգալի մասը զրկվեց հողից, անասուններից և բռնեց պանդխտության ճանապարհը։ 1895 թվականին Երևանի Նահանգի հողազուրկ գյուղացիության թիվը կազմում էր 5211 մարդ (1209 գյուղացիական ընտանիք)։[5] Այդ նույն տարիներին Երևանի գավառի ցանք չունեցող գյուղացիների թիվը կազմում էր 36 տոկոս։ Իսկ բանող անասուններից զուրկ գյուղացիներինը՝ 37 տոկոս։ 1884 թվականին Զանգեզուրի գավառից պանդխտության են դիմել մոտ 3000 գյուղացի, 1893 թվականին Նոր-Բայազետից հեռացել են

---

[1] Проф. *В. Рютуни*. Крестьянская реформа в Армении. («Տեղեկագիր» ՀՍՍՌ ԳԱ. Հասարակական գիտությունների սերիա, 1944 թ., № 5, էջ 56։

[2] Сборник сведений о Кавказе, т. I, Тифлис, 1871, էջ 9։

[3] *И. Адлер*. Железнодорожное строительство на Кавказе (газ. „Кавказ", Тифлис, 1912, № 97, էջ 2)։

[4] Գյուղում վաշխառուների կողմից կատարված հարստահարությունների մասին Գ. Տեր-Մելիքսեդեկյանը գրում էր. «Գյուղացիք գարագ են վերցնում աներևակայելի սականներով։ 16—54 տոկոս համարվում է սովորական։ 10 ռուբլուց մոտավորապես 30 կոպեկ (տարեկան 36 տոկոս) սովորական երևույթ է։ Մակայն լինում է նաև մեկ ռուբլուց մոտավորապես 5 կոպեկ՝ այսինքն տարեկան 60 տոկոս... փոխառության գումարներն էլ ավելի ծանրանում են, երբ գարագատերը գալիս է ոչ թե վերջիվերջ, այլ բերքը նախապես ծախելու գումարով։ Այդ ժամանակ գյուղացին սահմանված ծախում է իր գալիք բերքը այն գնով, որ կարելի է առաջարկել վաշխառուն։ Այսպիսով՝ գարնանը խաղողի խաղարը (30 փութ) ծախում են 8 ռուբլի, մինչդեռ այնտեղ նրա սովորական գինը 63—30 ռուբլի է» (Գ. Տեր-Մելիքսեդեկյան, «Նվեր գյուղացիներին», Թիֆլիս, 1879 թ., էջ 16)։

[5] *О. Семен*. Великая годовщина. Киев, 1911, էջ 29։

1347 մարդ, իսկ 1894 թվականին՝ Մեծ Ղարաքիլիսայից՝ 1900 մարդ։[1] Պանդըիտության դիմող հայ գյուղացիությունը գնում էր գլխավորապես Բաքու, Թիֆլիս, Բաթում և երբեմն էլ Ռուսաստանի կենտրոնները։

Գյուղացիության մեջ կապիտալիստական հարաբերությունների զարգացմանը խթանեց նաև այն հանգամանքը, որ արդեն 1860-ական թվականների վերջերից սկսած ռուսական կապիտալը մուտք գործեց հայկական գյուղը։ Այսպես՝ 1872 թվականին գեներալ Կախանովը պետությունից 65 տարով կապալով վերցրեց Արագդայան տափաստանի տասնյակ հազարավոր հեկտար հողերը, ստեղծեց կապիտալիստական խոշոր տնտեսություն և մշակեց բամբակ ու հացահատիկային կուլտուրաներ։[2] 1880-ական թվականներին Հայաստանի գյուղերում երևացին Մոսկվայի, Վարշավայի, Թիֆլիսի, և Ռուսաստանի արդյունաբերական այլ կենտրոնների բուրժուազիայի ներկայացուցիչները, որոնք աշխատեցին իրենց արդյունաբերության համար հումքի մատակարարող բազաներ ստեղծել Հայաստանի գյուղերում։ Այսպես, օրինակ, 1880-ական թվականների սկզբներին Ռուսաստանի տեքստիլ արդյունաբերության խոշոր ներկայացուցիչներից մեկի՝ կապիտալիստ Սավվա Մորոզովի գործակալները բամբակ մթերելու նպատակով հատուկ գրասենյակներ բաց արին Երևանի նահանգում։

Գյուղատնտեսության մեջ կապիտալիստական հարաբերությունների զարգացման հետևանքով նշանակալից չափով զարգացան մի շարք կուլտուրաներ և, առաջին հերթին, բամբակի կուլտուրան։ Բամբակի արտադրությունը Երևանի նահանգում հետևյալ պատկերն է ունեցել. 1861 թվին արտադրվել է 30.000 փութ բամբակ, 1870 թվին՝ 270.000, 1889 թվին՝ 508.764 փութ բամբակ։[3] Արագ տեմպերով զարգացել էր նաև այգեգործությունը և, մասնավորապես, խաղողագործությունը։ Այսպես, եթե Երևանի գավառի խաղողի այգիների տարածությունը 1870 թվականին հավասար էր 2890 դեսյատինի,[4] ապա 1897 թվականին այն կազմում էր 8467 դեսյատին։[5] Զարգացել էր նաև ծխախոտի կուլտուրան։ 1896 թվականին Երևանի նահանգից ստացվել է 7231 փութ 6 ֆունտ ծխախոտ։[6]

Կապիտալիզմի զարգացումը տեղի ունեցավ ոչ միայն գյուղատնտեսության մեջ։ 1860—1880-ական թվականների շրջանը բնորոշ է նաև այն տեսակետից, որ այդ ժամանակաշրջանում ծնունդ է առնում և կազմավորվում արդյունաբերական կապիտալիզմը ինչպես ամբողջ Անդրկովկասում, այնպես էլ Արևելյան Հայաստանում։ Կապիտալիստական արդյունաբերության առաջին ձեռնարկություններն Անդրկովկասում հիմնվեցին դեռևս 1860-ական թվականներին։ Անդրկովկասի պատմության այդ շրջանը կա-

[1] *С. Зиваров.* Опыт исследования сельского хозяйства... Эриванской губернии и Карсской области. Тифлис, 1899, էջ 284, 285։

[2] *М. Сагателов.* Экономические очерки Эриванской губернии и озеро Гокча. Тифлис, 1879, էջ 9։

[3] *И. Петрович.* Хлопководство в Закавказьи. Тифлис, 1913, էջ 11—12։

[4] *Г. Данилович.* Араксская равнина. Сборник. Разд. „Район Тифлисско-Карсско-Эриванской ж. д. в экономическом и коммерческом отношениях". Тифлис, 1897, էջ 690—698։

[5] Сборник статистических данных о землевладении и способах хозяйства в пяти губерниях Закавказского края. Под ред. Е. Кондратенко, Тифлис, 1899, էջ 95։

[6] Նույն տեղը։

բելի է անվանել արդյունաբերական հեղաշրջման շրջան։ Սակայն, ի բաց առյալ Բաքուն, ուր կապիտալիստական արդյունաբերությունը զարդացավ խիստ արագ տեմպերով, Անդրկովկասի արդյունաբերության զարգացումը, ամբողջությամբ վերցրած, ընթանում էր դանդաղ։ Առանձնապես դանդաղ էր զարգանում արդյունաբերությունը Հայաստանում, ուր մեղ հետաքրքրող շրջանում փաստորեն ստեղծվեցին կապիտալիստական արդյունաբերության միայն երկու կիստրոններ՝ Ալավերդին և Զանգեզուրը։ Ալավերդու պղնձահանքերը մինչև 1887 թվականը շահագործում էին հույն հանքագործները, իսկ դրանից հետո՝ ֆրանսիական ակցիոներական ընկերությունը։ Ալավերդու պղնձաձուլարանների տարեկան արտադրանքը եղել է 1861 թվականին 4807 փութ, 1871 թվականին՝ 7325 փութ, 1900 թվականին՝ 19.682 փութ պղինձ։[1] Զանգեզուրի պղնձաձուլարանների արտադրանքը եղել է 1858 թվականին 2485 փութ, 1873 թվականին՝ 10.147 փութ, 1887 թվականին՝ 15.312 փութ, 1900 թվականին՝ 51.783 փութ պղինձ։[2] 1880-ական թվականներից սկսած Հայաստանում դիմեցին արդյունաբերական ձեռնարկություններ նաև բամբակի, գինու, կոնյակի, մետաքսի ու կաշվի արտադրության գծով։

Զգալի չափով ընդարձակվեց և՛ ներքին, և՛ արտաքին առևտուրը, ծավալվեց դրամական շրջանառությունը։ Անդրկովկասի բուրժուազիան մշտական կապեր հաստատեց Ռուսաստանի, Արևմտյան Եվրոպայի երկրների և ապա Պարսկաստանի ու Թյուրքիայի առևտրական կենտրոնների հետ։ Թե ինչպիսի զարգացում է ունեցել Անդրկովկասի առևտուրը, այդ մասին վկայում են հետևյալ թվերը։ 1862—1866 թվականների ընթացքում Անդրկովկասի առևտրի տարեկան շրջանառությունը, միջին հաշվով, կազմում էր 11.815.891 ռուբլի, 1872—1876 թվականների շրջանում՝ 14.139.270 ռուբլի, իսկ 1886 թվականին՝ 39.264.547 ռուբլի։[3]

Հարաճուն առևտուրը խոշոր ազդեցություն թողեց արհեստավորական արտադրության վրա։[4] Ռուսաստանից ու եվրոպական երկրներից ներմուծվող արդյունաբերական ապրանքները շուկայից աստիճանաբար դուրս էին մղում տեղական արհեստավորական արտադրանքը, որը ի վիճակի չէր մրցելու համեմատաբար բարձրորակ և էժանագին ներմուծվող արդյունաբերական ապրանքների հետ։ Սրա հետևանքով արհեստավորները կանգնեցին փակուղու առաջ և ընկան տնտեսական ծանր դրության մեջ։ Համքարությունները սկսեցին քայքայվել։ Արհեստավորության մի զգալի մասը թողնելով արհեստները, աշխատանքի ընդունվեցին գործարաններում և արդյունաբերական այլ ձեռնարկություններում։ Համքարությունների քայքայման այս շրջանում տեղի ունեցան համքարական ելույթներ, որոնցից առանձնապես նշանավոր է Թիֆլիսի հայ համքարների 1865 թ. ելույթը։

---

[1] „Кавказский календарь" за 1861, 1871, 1900.

[2] *О. Карапетян*. Краткий очерк развития горного дела на Кавказе. Тифлис, 1901, էջ 14.

[3] Краткий очерк экономического положения Кавказа по новейшим оффициальным и другим отчетам. Тифлис, 1888, էջ 12.

[4] 1870 թվականին Երևանում համքարությունների մեջ ընդգրկված էին 2081 արհեստավոր (վարպետներ ու աշակերտներ), համքարություններից դուրս՝ 270 արհեստավոր (տես *С. А. Егиазаров*. Исследования по истории учреждений в Закавказьи. Часть 2. Казань, 1891, էջ 264)։

Կապիտալիզմի զարգացման տեմպերի մասին որոշ գաղափար կարող են տալ նաև քաղաքային բնակչության աճին վերաբերող տվյալները։ 1865 թվականին Բաքուն ուներ ընդամենը 14.715 բնակիչ, 1897 թվականին՝ 112.252 բնակիչ. Թիֆլիսը 1875 թվականին ուներ 67.770 բնակիչ, իսկ 1897 թվականին՝ 160.645 բնակիչ։ Համեմատաբար դանդաղ էին աճում Հայաստանի քաղաքները. 1865 թվականին Երևանն ուներ 14.070 բնակիչ, 1886 թվականին՝ 17.738, իսկ 1897 թվականին՝ 29.023 բնակիչ։ Ալեքսանդրոպոլը 1865 թվականին ուներ 16.814 բնակիչ. 1886 թվականին՝ 24.230, իսկ 1897 թվականին՝ 32.230 բնակիչ։[1]

Անդրկովկասի կապիտալիստական զարգացման գործում նշանակալից դեր խաղաց հայ բուրժուազիան, որ մինչև 1860-ական թվականները զբաղվում էր բացառապես առևտրով։ Հայ առևտրական բուրժուազիայի մի մասը 1860-ական թվականներից սկսած անցավ արդյունաբերական գործունեության։ Թողնելով առևտրական օպերացիաները, նա հիմնեց ֆաբրիկաներ. գործարաններ և արդյունաբերական այլ ձեռնարկություններ։ Նոր ձևավորվող արդյունաբերական հայ բուրժուազիան կենտրոնացավ գլխավորապես Հայաստանից դուրս՝ Բաքվում, Թիֆլիսում և Իաթուժում։ Հայաստանում նա կապիտալ ներդրեց Զանգեզուրի պղնձարդյունաբերության մեջ։ Հայ արդյունաբերական բուրժուազիան կուտակեց խոշոր կապիտալներ։ Նա փաստորեն իր ձեռքում կենտրոնացրեց Բաքվի նավթարդյունաբերության մի խոշոր մասը և իշխող դիրք գրաված Անդրկովկասի տեքստիլ արդյունաբերության մեջ։ Նրան էին պատկանում ծխախոտի գրեթե բոլոր գործարանները։ 1879 թ. Բաքվում շահագործվում էր 295 նավթահոր, որոնցից 155-ը պատկանում էր հայ բուրժուազիային։ 1876 թ. վիճակագրական տվյալներով՝ Թիֆլիս քաղաքի առևտրականների ընդհանուր թիվն էր 6851, որից հայ՝ 4249։ Նույն տվյալներով՝ Թիֆլիսում արդյունաբերական կոչով զբաղվողների ընդհանուր թիվն էր 13.137 մարդ. որից հայ՝ 5919 մարդ։[2] 1890-ական թվականներին Թիֆլիսի առևտրական-արդյունաբերական ձեռնարկությունների 62 տոկոսը հայ բուրժուազիային էր պատկանում։ Ընդհանուր առմամբ՝ թե առևտրական բուրժուազիան և թե արդյունաբերական բուրժուազիան իշխող դիրք ունեին Անդրկովկասի տնտեսական կյանքում։ Այս հանգամանքի շնորհիվ նրանց դերը խոշոր էր նաև երկրի հասարակական-քաղաքական կյանքում։

Սակայն կապիտալիստական զարգացման այն պրոցեսները, որ մենք նշեցինք վերևում, ի վիճակի չեղան, այնուամենայնիվ, խոշոր տեղաշարժեր կատարելու տնտեսական կյանքում և փոխելու երկրի տնտեսական դեմքը։ Արևելյան Հայաստանը, ինչպես և ամբողջ Անդրկովկասը, ոչ միայն 1860—1880-ական թվականներին, այլև ավելի ուշ, հետագա տասնամյակներին, շարունակեց մնալ որպես հետամնաց ագրարային երկիր՝ ֆեոդալական-ճորտատիրական հարաբերությունների բազմաթիվ մնացորդներով։ Ընկեր Ստալինը Անդրկովկասի մասին 1918 թվականին գրում էր. «Անդրկովկասի մեկ ուրիշ ոչ պակաս բնորոշ գիծը նրա տնտեսական հետամնացությունն

[1] Ф. Махарадзе. Очерки революционного движения в Закавказьи. Тифлис, 1927. էջ 43։

[2] Сборник сведений о Кавказе. Под ред. Н. К. Зейдлица, т. VI. Тифлис, 1880, էջ 229։

է։ Եթե չհաշվենք Բաքուն, երկրամասի այդ արդյունաբերական ոգիսը, որին շարժում է գլխավորապես արտասահմանի կապիտալը, ապա Անդրկովկասը ներկայացնում է մի ագրարային երկիր, ավելի կամ պակաս դարդացած առևտրական կյանքով՝ ծայրամասերում, ծովերի ափերին և գուա ճորտատիրական կացութիւնի դեռևս ամուր մնացորդներով՝ կենտրոնում։[1]

Ոչ 1870 թվականի ագրարային-գյուղացիական ռեֆորմը, ոչ էլ ձևավորվող ու դարդացող կապիտալիզմը չկարողացան վերացնել ֆեոդալական հարաբերությունները Հայաստանի, ինչպես և ամբողջ Անդրկովկասի աշխատավորական-գյուղացիական հոծ մասսաները մեղ այստեղ հետաքրքրող ժամանակաշրջանում՝ 1860—1880-ական թվականներին, կանգնած էին բուրժուա-դեմոկրատական ռևոլուցիայի խնդիրները լուծելու անհրաժեշտության առաջ։ Նշված ժամանակաշրջանի հիմնական հարցը ագրարային-գյուղացիական հարցն էր։[2] Դասակարդային պայքարի առանցքը կազմում էր գյուղացիական մասսաների պայքարը ֆեոդալական հարաբերությունների և դրանց պաշտպան ցարիզմի դեմ։ Այս տեսակետից էական տարբերություններ չկային Ռուսաստանի և Անդրկովկասի միջև։ Ճիշտ է, սոցիալ-տնտեսական դարդացման տեսակետից Անդրկովկասն ավելի հետամնաց էր, քան Ռուսաստանը։ Կապիտալիստական դարդացման երևույթները Ռուսաստանում ավելի զարդացած էին, քան Անդրկովկասում։ Սակայն այդ տարբերությունները քանակական էին, բայց ոչ որակական։

Տնտեսական-հասարակական դարդացման անհամեմատ ավելի ցածր մակարդակի վրա էր գտնվում Արևելյան Հայաստանը։ Այստեղ իշխող հասարակական ձևը ֆեոդալիզմն էր, որ ապրում էր քայքայման թույլ պրոցես։ Սուլթանական կառավարության 1834 թվականի հողային ռեֆորմը, որ նպատակ ուներ վերացնել ռազմա-ֆեոդալական խոշոր հողատիրությունը

[1] *И. Сталин.* Закавказские контрреволюционеры под маской социализма. „Правда". М., 1918. №№ 55 и 66.

[2] Ֆեոդալական հարաբերություններն առկա էին գլխավորապես այն պարտադիր հարաբերությունների մեջ, որոնք սահմանվեցին կալվածատիրական գյուղացիության և կալվածատեր հողատերերի միջև 1870 թ. մայիսի 14-ի գյուղացիական ռեֆորմից հետո։ Կալվածատիրական գյուղացիությունը, որի թիվը Անդրկովկասում կազմում էր մոտ 170.000 (այսինքն՝ ամբողջ գյուղացիության 24 տոկոսը), ֆեոդալական բազմաթիվ պարտավորություններ էր կատարում կալվածատիրոջ համար։ Ժամանակավոր կարգով անվանված այդ գյուղացիության վիճակի մեջ փոփոխություններ տեղի ունեցան միայն 1912 թ. դեկտեմբերի 30-ի օրենքով։ Պետական գյուղացիությունը, որի թիվն Անդրկովկասում, մոտավոր հաշիվներով, կազմում էր 560.000, իրավաբանորեն ազատ էր ֆեոդալական պարտավորություններից, սակայն տնտեսական կարգման մեջ ընկնելով կալվածատերերից (պետական գյուղացիության մի զգալի մասը հողատակության պատճառով կապալով հող էր վերցնում կալվածատերերից), անխուսափելիորեն ընդգրկվում էր ֆեոդալական հարաբերությունների ցանցի մեջ։ Հայաստանի մի շարք գավառներում տիրող ֆեոդալական հարաբերությունների մասին հետաքրքիր տեղեկություններ են հայտնում ժամանակակիցները (տես՝ «Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края», т. I, часть 2, Тифлис, 1886. էջ 208).

[3] Հողի խիստ պակասություն էր զգում մեր պետական և մեր կալվածատիրական գյուղացիությունը։ Հողային ֆոնդի լավագույն և խոշորագույն մասը կենտրոնացած էր կալվածատեր-հողատերերի ձեռքում։ Այսպես, օրինակ, Թիֆլիսի նահանգի Բորչալու գավառի հողերի 72,9 տոկոսը գտնվում էր կալվածատերերի ձեռքին (*Аргутинский-Долгоруков.* Борчалинский уезд. Сборник. „Разд. Район Тифлисско-Карсско-Эриванской ж. д. в экономич. и коммерческом отношениях", Тифлис, 1897. էջ 64).

և դրանով իսկ թուլացնել կենտրոնախույս ուժերը, գրեթե չկիրառվեց Արևմտյան Հայաստանի այն մասերում, ուր իշխող քյուրդ շեյխերն ու բեյերը կիսանկախ էին և մթանդամայն թույլ կապեր ունեին կենտրոնական կառավարության հետ։ Նույն բախտին արժանացան նաև 1839 թվականի Խաթը Շերիֆը, 1856 թվականի Խաթը Հյումայունը, 1876 թվի սահմանադրությունը և թանզիմաթ ազդարարող սուլթանական մյուս հրովարտակները։ Քյուրդ ավատական դասը տնտեսական ու արտատնտեսական անսահմանափակ շահագործման էր ենթարկում գյուղացիական դանգվածներին, որոնք գերազանցապես կազմված էին հայ բնակչությունից։ Քյուրդ ֆեոդալների համար դոյություն չունեին նորմաներ։ Քյուրդ կամ թյուրք բեգերը, աղաները կամ դերեբեյները գյուղացուն շահագործում, հափշտակում, նրանից վերցնում էին այնքան, որքան իրենք էին ցանկանում։ Գյուղացին ֆեոդալի համար կոռ ու բեկար էր կատարում։ Տղամարդիկ նրա համար տներ, բերդեր ու ճանապարհներ էին կառուցում, իսկ կանայք՝ տնային աշխատանք կատարում։ Արևմտյան Հայաստանի որոշ մասերում և մասնավորապես Մուշի, Բիթլիսի ու Վանի գավառներում, հայ գյուղացիությունը գտնվում էր ճորտական վիճակում։ Այս մասին մենք ունենք բազմաթիվ վկայություններ, որ թողել են մեզ ժամանակակիցներն ու ականատեսները։ Բերենք մի քանի վկայություններ։ Կ. Պոլսում հրատարակվող «Մասիս» լրագրի 1872 թվականի համարներում հրատարակվեց Մուշից գրված մի թղթակցություն, ուր ասված էր. «Մերաքնյա դաս մը ժողովուրդ, որ է Բոնաշեն, ի Խութ, ի Սասուն և ի Շատախ գավառներ, քյուրդերու հետ խառն կընակվին։ Նոցա գլխավորներուն որ խաֆիր կսվին, ճորտ լինելով, ամենաղառն կենցաղ վիճակված է։ Դաս-դաս նոցա բաժին եղած, յուրաքանչյուրն իրրև հպատակ ե սեփականություն համարված, տարեկան տուրք կուտան խաֆիրներուն... Այս մարդակեր դաղան խաֆիրներ՝ ինքնագլուխ և ապստամբ վիճակի մեջ լինելով, իրենց ճորտ հայերը կանամբ և որդվովք, շարժական ե անշարժ կալվածքներով իրարու ծախելու սովորություն ունին, և երբ իրարու դեմ կատաղին կամ թշնամանան, յուրաքանչյուրն իրեն՝ հպատակ հայերին բռնությամբ առաջնին ձգելով, իրարու սահման կասպատակեն, մանավանդ հայոց գյուղերու վրա հարձակվելով, կկողոպտեն, կվիրավորեն, կսպանեն և կվերադառնան տեղերնին... Դերիի տեր խաֆիրներ, երբ մարդ ծնանելու լինին, հանձն յուր ճորտի տունեն՝ կառամբ և ոչխարով աչքալուսի պիտի երթան, աղայի ղղեստացու պիտի տանեն, այնինչ հայոց մերկանդամ կանայք ձեռքերով իրենց կուրծքը ծածկելու աղքատ վիճակի մեջ կգտնվին։ Երբ պատանեկության հասնին, դենք պիտի պատրաստեն անոր։ Հինայելու ատենը, դալան (բաշլըդ) պիտի տանին հարսնացու ծնողաց, և հարսանքաց պիտույք պիտի պատրաստեն։ Եթե մեռած էլ պատահի, ոչխարյուղ, պանիր ե այլն տանելով՝ կմխիթարեն դխաֆիրները։ Բայց ընդհանուր ազդության նախատինք այն կետն է, որ նահապետացն հայոց պարկեշտության առաղաստի հույսը և սրբության քողի ներքև սնված աղջիկներ այսօր հոլանի եղած, խաֆիրներու տան մեջ, իրրև հարս՝ օրերով ձավարը, կորկոտը շինելու, լաթը լվանալու և կարկատելու սպասարկություն կընեն՝ լին արտասվելով և անոնց կըլկըլի արտերը քաղհանելու շարաթներով

կաշխատին մերկ անձամբ և բորիկ ոտամբ, արևակեղ և աղթատար եղած»։[1]

Արևմտահայ գյուղացու ճորտական վիճակի մասին իր ժամանակ գրել է նաև Կ. Պոլսի հայ պատրիարք Ներսես Վարժապետյանը։ Սուլթանական կառավարությանն ուղղված իր մի բողոքագրի մեջ, ուր մանրամասնորեն նկարագրված էին Արևմտյան Հայաստանի գավառներում կատարվող հարբստահարությունները, Վարժապետյանը խոսելով Մոկս գավառի մասին, գրում էր, թե՝ «Դուրգ պեյերը գյուղացի հայերն իրենց մեջ իբրև գերի կվաճառեն»։ Այսօրինակ փաստերի մասին հայտնում էին նաև Գարեգին Սրվանձտյանը,[2] Պողոս Ծ. վ. Նաթանյանը,[4] ֆրանսիացի հրապարակախոս Մուլուժանը[5] և ուրիշները։ Արևմտահայ գյուղացու ճորտական վիճակը շարունակվում էր գեռևս 1890-ական թվականներին և ավելի ուշ՝ 20-րդ դարի սկզբներին։ 1890-ական թվականներին Արևմտյան Հայաստանում ուղևորություն կատարած անգլիական նշանավոր ճանապարհորդ և աշխարհագրագետ Լինչը մոտիկից ծանոթանալով Արևմտյան Հայաստանում տիրող դրությանը, գրում էր. «Ճորտական իրավունքը անհայտ չէ այս երկրի համար... Ճորտ հայերը հայտնի են Ջեր-Կուրի անվան տակ, որ նշանակում է ոսկով գնվածներ։ Եվ իսկապես նրանք գնվում և վաճառվում են՝ քուրդ բեյերի ու աղաների կողմից, ճիշտ այնպես, ինչպես որ գնվում և վաճառվում են ոչխարն ու տավարը։ Միակ տարբերությունն այն է, որ այդ մարդիկ չեն կտրվում իրենց հողից և վաճառվում են այն հողի հետ միասին, որը որ նրանք մշակում են»։[6] 1903 թվականին խոսելով արևմտահայերի գրության մասին, ֆրանսիական պառլամենտի սոցիալիստական պարտիայի առաջնորդ Ֆրանսիս Պրեսանսեն ասում էր, որ արևմտահայ գյուղացիները քյուրդերի ձեռքին «ժառանգական ստրուկներ դարձել են»։ Այդ նույն շրջանի արևմտահայ գյուղացիության վիճակի մասին՝ այդ հարցն ուսումնասիրողներից մեկը գրում էր. «Խաֆիրառու քյուրդ աղաները վարվում են հարկատու գյուղացիների հետ, ինչպես ստրուկների հետ, այսինքն ծախում են, գնում են նրանց իբրև ապրանք»։[8]

Սակայն ճորտական իրավունքը տիրում էր Արևմտյան Հայաստանի ոչ բոլոր մասերում։ Երկրի այն գավառներում, ուր ռեալ իշխանություն

1 «Մասիս», 1872, № 1239։ Այս նույն թղթակցության մեջ ասվում էր, որ յուրաքանչյուր առն խաֆիրին տալիս է «յոթ բեռ ցորեն, մեկ պահար, հինգ ոչխար, երկու լիտր յուղ, երկու օխա ծխախոտ, մեկ լիտր շորթան, չորս լիտր աղ, մեկ շալվար, մեկ զույգ գանդապան, մեկ զույգ գուլպա, մեկ զույգ խոնջան, մեկ զույգ գոգոցի ժապավեն, երկու ունկի վառոդ, երկու ունկի կապար, երկու ունկի կանեփ, հինգ ունկի ձեթ, հինգ հատ պուռուկ, երկու շերեփ, երեսուն գդալ, չորս թի, երկու կողով, վեց ցախավել, մեկ գանակ, չորս հավ, երկու աքաղաղ, տաս սարակ, վեց արոր, 1243 զուռուշ տուգ և տարեն երկու անգամ ունեցած ոչխարաց կաթ, գարնան պանիր շինելու և աշնան մածուն բռնելու համար։

2 «Աստնագրութիւնք Հայոց ժողովոյ», Կ. Պոլիս, 1876, էջ 226։

3 Գարեգին վ. Սրվանձտյանց, «Հնոց և նորոց», Կ. Պոլիս, 1874, էջ 172։

4 Պողոս Ծ. վ. Նաթանյան, «Արտասր Հայաստանի կամ տեղեկագիր Բալուս, Փարբերդ, Ջարսանջակի, Ծապաղչուրի և Երզնկայ», Կ. Պոլիս, 1883, էջ 56։

5 *Fr. Mullugent.* La Turquie sous la regne d'Abdul-Aziz, Paris, 1868, էջ 168։

6 *Х. Ф. Б. Линч.* Армения. Путевые очерки и этюды. Пер. с англ. Е. Джунковской, т. II, Тифлис, 1910, էջ 654։

7 «Հայաստան և Մակեդոնիա», Ժընև, 1903 թ., էջ 40։

8 Ն Թոփչյան, «Երիտասարդ Թյուրքիան և հայերը», Թիֆլիս, 1909 թ., էջ 39։

ունեին կենտրոնական կառավարության օրգանները և ուր այսպես թե այնպես կիրառվել էին Թանզիմաթի օրենքները, գյուղացին իրավականորեն ազատ էր և սեփականատիրական իրավունքով օգտվում էր հողից։ Արևմտյան Հայաստանի այդ մասերում գոյություն ունեին հողատիրության երեք հիմնական ձևեր. 1. պետական, 2. վակուֆային, 3. մասնավոր (մյուլքային)։[1] Առաջին և երկրորդ կարգի հողերը պատկանում էին պետությանը, սուլթանական պալատին, տոհմային բարձրաստիճան պաշտոնյաներին և մզկիթներին ու մահմեդական հոգևորականությանը։ Երրորդ կարգի հողերն այն հողերն էին, որոնք որպես սեփականություն պատկանում էին կալվածատեր բեգերին, աղաներին և գյուղացիներին։ Սուլթան Աբդուլ Մեջիդի 1858 թ. հրատարակած օրենքի համաձայն, հողի մասնավոր սեփականության իրավունքից կարող էր օգտվել միայն նա, ով որ ուներ պետության կողմից հաստատված կալվածագիր՝ թափու։ Բեգերից ու աղաներից բացի՝ այդ թափուներից ուներ նաև արևմտահայ գյուղացիության մի զգալի մասը։ Գյուղացիության մյուս մասը, որ հողազուրկ էր, կիսաճորտական պայմաններով աշխատում էր բեգերի ու աղաների հողերի վրա։

Հողազուրկ այդ գյուղացիությունը կոչվում էր մարաբա։ Մարաբա գյուղացու հիմնական տիպն այն գյուղացին էր, որը «զուրկ է ամեն ինչից՝ և՛ հողից, և՛ սերմից, և՛ լծկանից, և գործիքից... Այսպիսի մարաբան վերցնում է աղայից հողը, սերմը, լծկանը, գործիքները և բերքի ½-ը տալիս է աղային, իսկ միմիայն ½-ը իրեն վերցնում... Նախքան բերքի կիսելը վճարվում է կառավարության հասանելիք տասանորդի տուրքը... Մարաբան դեպի աղան ունի մի շարք պարտականություններ, որոնք հաճախ ավելի ծանր են նրա համար, քան նույնիսկ իր աշխատանքի արդյունքի ½ մասի վճարելը։ Մարաբան պարտական է կատարել աղայի տնային ու դաշտային աշխատանքները... Եթե աղայի ընտանիքը գյուղումն է գտնվում, մարաբայի կինն ու աղջիկը պարտավոր են կատարելու աղայի տան կարը, լվացքը, դորձվածքներ և այլ աշխատանքները։ Այս ձևի օլամական աշխատանքները որևէ նորմայի կամ չափի տակ չեն մտնում, այլ այդ աշխատանքների քանակը, որակը և տեսակը կախված է աղայի կամքից... Աղան նայում է մարաբայի վրա իբրև մի գրաստի, ոտքի տակ տալով նրա մարդկային բոլոր արժանիքները»։[2] Դժվար չէ եզրակացնել, որ մարաբա գյուղացիությունը, որը, ի դեպ ասած, իր մեջ ընդգրկում էր հավասարապես թե հայ և թե թյուրք գյուղացիներին, կիսաճորտական վիճակ էր ապրում։ Մարաբա գյուղացու վիճակը ճորտ գյուղացու վիճակից տարբերվում էր միայն նրանով, որ առաջինը ամրացված չէր հողին և իրավականորեն ազատ էր։ Նա կարող էր աշխատել այնտեղ, որտեղ ինքը ցանկանում էր։[3]

---

[1] Գ. Վարդանյան, «Հողատիրությունը Թյուրքիայում» (տես «Մուրճ», Թիֆլիս, 1893 թ., № 5, էջ 771, 772. հմմտ. Հ. Մուրադյան, «Հողատիրությունը Թյուրքիայում» (տես «Մուրճ» 1899, № 10)։

[2] Ա-դո, «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները», Երևան, 1912 թ., էջ 285։

[3] Մարաբայության էությունը մի շարք ուսումնասիրողներ ճիշտ չեն հասկացել։ Այսպես, օրինակ, Գեղամ Տեր-Կարապետյանը սխալ է կատարում, երբ գրում է. «Մարաբայությունը լուծկի վրա գրամ փոխ տալու գրությունն է։ Դրամ ավող և առնողը միանգամայն միրգա կկշվին» (տես՝ Գեղամ Տեր-Կարապետյան, «Հողային հարցը հայրենակ նահանգներում մեջ», Կ. Պոլիս, 1910 թ., էջ 29)։

Խիստ ծանր էր նաև հողային սեփականություն ունեցող գյուղացիության վիճակը։ Այս կարգի գյուղացին ուներ սեփական հող, իրավաբանորեն ազատ էր ֆեոդալական պարտավորություններից։ Սակայն այդպես էր միայն թղթի վրա։ Իրականում դրությունն այլ էր։ Արևմտյան Հայաստանում միանգամայն ոտնահարված էին իրավական նորմաները։ Օրենքներին փոխարինում էին բեգերի, աղաների, ինչպես և խաֆիրների, թոռունների ուժը, կամայականությունը և ցանկությունը։ Իրավացի էր թյուրքական կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներից մեկը, որը կառավարությանն ուղղած իր պաշտոնական զեկուցագրերից մեկում խոսելով Արևմտյան Հայաստանի մասին, գրում էր. «Այս կողմերը «ուժը իրավունքին կհալթանակեն», բռնապետական պատգամը իր իմաստի ամբողջությամբ կտիրապետե... Գյուղացիներու հողը, կայքը, ընտանի անասունները, մինչև իսկ պատիվին ու կյանքերնին աղայի քմահաճույքին ենթակա են»։[1] Իրավականորեն ազատ և սեփականատեր համարված գյուղացին մշտապես ենթակա էր անլուր ճնշումների, հալածանքների ու հետապնդումների։ Ամեն մի քիչ թե շատ ուժեղ բեգ, աղա կամ թոռուն կարող էր առանց դժվարության խլել գյուղացիների հողը, տունը և կայքը։ 1870-ական թվականներին, երբ քրդական վերնախավը իր օր-ավուր աճող տնտեսական պահանջները բավարարելու համար սկսեց հողային մեծ կուտակումներ կատարել, արևմտահայ գյուղացիության հողերի բռնագրավումը ստացավ մասսայական կերպարանք։ 1874—1876 թ. թ. ընթացքում գավառական հարստահարությունների մասին Կ. Պոլսի հայ պատրիարքարանի կողմից կազմված տեղեկագրերը բերում են հարյուրավոր օրինակներ, որոնք պերճախոս կերպով ցույց են տալիս, թե ինչպես քյուրդ և թյուրք բեգերը, աղաներն ու մյուս կարգի ֆեոդալները խլում են գյուղացիների հողերը, կալվածները և դրանք իրենց սեփականություն հայտարարում։ Ավելին. քրդական ղերեբեյներն ու աշիրաթապետները գրավում էին ամբողջ գյուղեր, դուրս քշելով այնտեղից նրանց բնակչությունը և սեփականացնելով նրանց ամբողջ հողային հարստությունը։ Այդ տեղեկագրերում զետեղված ցուցակներից պարզվում է, օրինակ, որ միայն 1874 թվականի ընթացքում Վանի գավառում հողային հափշտակություններ են կատարվել 160, իսկ Դիարբեքիրի վիլայեթում՝ 110 հայկական գյուղերում։[2] Այդ հողային բռնագրավումները հետագա շրջաններում ավելի մեծ ծավալ ստացան։[3]

Գոյություն ունեցող օրենքների համաձայն, իրավականորեն ազատ գյուղացին պետք է բազմաթիվ և բազմատեսակ հարկեր վճարեր պետությանը։[4] Սակայն պետական «օրինականն» այդ հարկերից բացի՝ գյուղացին

---

[1] Ատոմ, «Պետական վերանորոգությունն ու հողային հարցը», Կ. Պոլիս, 1910 թ., էջ 8—9։ Մի ուրիշ հեղինակ գրում է. թե «Տաճկաստանի մեջ օրենքը մեռած առ է միայն, և կառավարությունը հայանի համարձակ կպաշտպանեն ժողովրդի հարստահարիչներին» (Մ. Գ. «Լինչի օրենքը Տաճկահայաստանում», Մարսելյ, 1889 թ., էջ 9)։

[2] «Տեղեկագիր գավառական հարստահարությանց», Կ. Պոլիս, 1876, էջ 28—36։

[3] «Տեղեկագիր հողային գրավման հանձնաժողովու», տետր Ա, Կ. Պոլիս, 1910 թ., էջ 1—11։

[4] Պետական գլխավոր հարկերն էին՝ 1. տասանորդ—«աշար», 2. հողային, 3. առևտրական, 4. գինվորական, 5. գպրոցական, 6. մառանդական, 7. ճանապարհների, 8. ագի, մեսաքսի և ծխախոտի, 9. դրոշմաթղթի, 10. մաքսային հարկ, 11. ոչխարների և մանր կենդանիների գլխաուրք, 12. շենքերի տուրք և 13. զանազան ուրիշ տուրքեր սառաֆներից, խանութ-

վճարում էր նաև ապօրինի, օրենքով չնախատեսված հարկեր։ Զինվորական ուժ ունեցող քրդական վերնախավի ներկայացուցիչները, որոնք կոչվում էին բեյեր, դինքի ուժով ստիպում էին գյուղացիությանը, որպեսզի նա իրենց ևս հարկեր վճարի։[1] Անպաշտպան գյուղացին ստիպված էր լինում կատարել այդ պահանջը, որովհետև հակառակ դեպքում քրդական հրոսակախմբերը կոչնչացնեին նրա ամբողջ ընտանիքը, ավերի և թալանի կմատնեին նրա կայքն ու գույքը։ Բյուրդ խոռունը մշտական ձև էր տալիս իր այդ պահանջին, գյուղացին պարբերաբար վճարում էր այն ամենը, ինչ որ պահանջում էր քյուրդ աղնվականը։ Այս ապօրինի հարկահանությունը, որ կոչվում է խաֆիրություն,[2] խիստ մեծ ծանրություն էր գյուղացու համար։ Թյուրքական կառավարությունը ոչ ցանկություն և՝ ոչ էլ կարողություն ուներ կռվելու այդ երևույթի դեմ։"

Մենք արդեն ասացինք, որ Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի ամբողջ երկրորդ կեսին և դեռ ավելի ուշ շրջանում իշխում էին ֆեոդալական հարաբերությունները։ Սակայն չի կարելի չնկատել այն փաստը, որ արդեն 1870-ական թվականներից սկսած Արևմտյան Հայաստանում աշխուժանում են ապրանք-փոխանակային հարաբերությունները։ Արևմտյան Հայաստանի մի շարք գավառներում վաճառքի հանվեցին մեծ քանակությամբ անգլիական ապրանքներ։ Ներքին առևտրի զարգացման վրա որոշ ազդեցություն թողեցին նաև առևտրական տարանցիկ ճանապարհները, մասնավորապես այն ճանապարհը, որը Տրապիզոնը միացնում էր Բայազետի և ապա Պարսկաստանի հետ։[4] Առևտրական այդ ճանապարհի շնորհիվ Կարինը դարձավ առևտրական նշանավոր կենտրոն։ 1879 թվականին Թիֆլիսում

գաններից, կառապաններից, որսորդներից, գենք կրողներից և այլն (տես Сборник географических, топографических и статистических материалов по Малой Азии, Вып. 66, Спб., 1896, էջ 55)։ Գ. Խաժակի ավյալներով՝ կային հետևյալ հարկերը. 1. գլխահարկ, 2. ասն, 3. հողային, 4. ճանապարհների, 5. զրաղմունքի, 6. ամուսնության, 7. կենդանիների, 8. երկրագործական (ասատանոց—աշար), 9. մասանգություն, 10. ապահովության և 11. պետական պատահական հարկեր (տես՝ Խաժակ—«Հարկերը Տաճկահայաստանում», Բաքու, 1903 թ., էջ 23)։ Մասավորապես նույն ավյալներն է բերում Լ. Սարգսյանը (տես՝ Լևոն Սարգսյան—«Այց Թուրքաց Հայաստանին», Թիֆլիս, 1896, էջ 83)։ Պետական պատահական հարկերն այս կամ այն պատրվակով հավաքվող միանվագ հարկերն էին։ Այդ կարգի հարկերը հաճախ հավաքում էին նաև արքունական շինությունների և ֆորքի տեղափոխության համար (տես՝ «Արձանագրություն ազգային մոդովոյ, 1871 թ., Կ. Պոլիս, էջ 31)։ 1867 թվականին Զար սանճակի հայ բնակիչները Կ. Պոլսի հայ պատրիարքին ուղղած իրենց նամակում ասում էին, թե իրենք հարկ են վճարում ենջեցյաներին գերեզմանոցում թաղելու համար, այլապես չի թույլատրվում որևէ թաղում կատարել։ Թյուրք փաշաները, ասված է նամակում, «Մեր ենջեցյաները գերեզմանատուն չթողուցին ամփոփել թե երկիրը մերն է» (ՀՍՍՌ Մատենադարան, արխիվ, կաթող. դիվան, 1867 թ.» թղթապանակ 202, փաստաթուղթ 549)։

[1] Գեղամ Տեր-Կարապետյան—«Հողային հարցը հայարնակ նահանգներում մեջ», Կ. Պոլիս, 1911, էջ 64—65։

[2] Նույն տեղ, էջ 32. խաֆիրությունը շատ հաճախ հորատական վիճակ էր ստեղծում գյուղացիության համար (տես «Մասիս», 1872 թ., 1239)։

[3] Արևմտյան Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին արվող հարկերի չափի ու նրանց գանձման սիստեմի մասին տես՝ Ա.-Դո—«Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները», էջ 282—302 և Գ. Խաժակ—«Հարկերը Տաճկահայաստանում», էջ 20—91։

[4] Բայազետը այն կետն էր, որի վրայով անցնում էր Թյուրքիայից Պարսկաստան տանող միակ առևտրական ճանապարհը.—գրում էր Մ. Ի. Բոգդանովիչը (տես՝ М. И. Богданович. Восточная война, 1853—1856 г. г.", изд. 2-е, т. I, С. Петербург., 1877, էջ 87)։

կարդացած իր մի դասախոսության մեջ Գրիգոր Արծրունին ասում էր, որ Էրզրումում, մինչև 1877—1878 թվականների ռուս-տաճկական պատերազմը, «Կոստանդնուպոլսից եկող ապրանքը պատահում էին Պարսկաստանից անցնող անմաքուշ հում բիրբերի հետ։ Այնտեղ թափվում էին, նույնպես ամեն կողմերից, Հայաստանի թե բնական բերքեր և թե հայ ազգաբնակության ձեռքերի վաստակը, աշխատասեր հայի և հայուհու արդյունագործությունները։ Այսպիսով թե բնիկ և թե օտարական առևտրականները, նույնպես և պարսիկ, հույն, երբեմն էլ եվրոպացի վաճառականներ հավաքվելով Էրզրումի մեջ, տալիս էին այդ քաղաքին կյանք և առևտրական նշանակություն։»[1]

Առևտրա-փոխանակային հարաբերությունների զարգացման հետևանքով երևան եկավ վաշխառուական կապիտալը։ Սոցիալական քայքայման պրոցես ապրեց գյուղը, ուժեղացավ պանդխտության հոսանքը։ Խոսելով այս հարցերի կապակցությամբ Արևմտյան Հայաստանի գավառներում տիրող դրության մասին, Դ. Սրվանձտյանը 1880 թվականին գրում էր. «Այժմ այս վիճակի մեջ ուրիշ բան չկա ժողովրդյան մեր գավառները, բայց միայն պարտք առնուլ, մուրհակ տալ, գրավ դնել իր անասունն, իր արտն, իր պարտեզն, իր տունն և ի լրանալ պայմանին, անտրտունջ թողուլ ագոնք և մեկնիլ։ Պարտքով կվճարեն տերության հարկը, պարտքով կգնեն իր ընտանյաց ապրուստն ու հագուստն, պարտքով դատ կվարեն... պարտքով պանդխտության ճամբու ծախքը կհոգան, պարտքով հարսանիք կընեն, պարտքով Եվրոպայե եկած կոնյակին և իքսիրին գինը կվճարեն։»[2] «Փորձ»-ի թղթակիցներից մեկը խոսելով Վանի և նրա հարևան գավառների գյուղացիության գրության մասին, գրում էր. «Վայ այն գյուղացուն, որ անբերության կամ մի հարսանիքի և կամ մի այլ արտաքո կարգի ծախուց պատճառով ստիպվում է մի ամենափոքր գումար վեր առնել տոկոսով, կամ ապառիկ ապրանք գնել։ Այս փոքրիկ գումարը զանազան դարձվածներով քիչ ժամանակի մեջ այնպիսի արագությամբ է մեծանում, որ այլևս սովորական նրան վճարելն անհնար է լինում, ուստի խեղճ գյուղացին յուր հողն ու տավարը չվաճառելու կամ գեթ ամրողջը չվաճառելու համար ստիպված է յուր գերդաստանից մի կամ ավելի հոգի Կ. Պոլիս կամ մի այլ մեծ քաղաք ուղարկել, որպեսզի դրամ շահին և ազատեն իրենց կալվածը։ Դժբախտաբար այսպիսի դրամառուություն և հետևաբար պանդխտությունը հաճախ է պատահում։»[3] Արևմտահայերի պանդխտության, որպես սոցիալական մի մեծ չարիքի մասին խոսել է դեռևս Միքայել Նալբանդյանը։ Իր գլուխ-գործոցի մեջ նա գրում էր. «... Ազգը օրըստօրե թողնում է յուր երկիրը և կենտրոնանում է քաղաքներում։ Աղքատությունը ստիպում է նորան թողուլ յուր տունը, յուր ընտանիքը, յուր ամուսինը, յուր զավակները և գնալ Պոլիս կամ այլ քաղաք աղքատությունից ազատվելու համար։»[4] Մուշ գավառի 1880-ական թվականների գրության մասին ժամանակակիցներից մեկը գրում էր. «Մշո աշխարհ 25 տարիեն մարդ չմնար, զարիպություն կավրե մեր աշ-

[1] Գրիգոր Արծրունի. «Թուրքաց հայերի տնտեսական դրությունը (հրապարակական դասախոսություն, կարդացված 1879 թ. մարտի 25)». Թիֆլիս, 1894 թ., էջ 6։

[2] Դ. վ. Սրվանձտյան, «Թորոս աղբար», Կ. Պոլիս, 1884, էջ ԺԴ։

[3] «Փորձ», 1879 թ. մարտ, էջ 65—66։

[4] Մի՛. Նալբանդյան, «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ», Երևան, 1930 թ., էջ 73։

խարհ... Կիսրարն ու վաշխառուությունն, իբրև ժանտախտ Մշո աշխարհն ի կորուստ մատնած են և եթե այդպես շարունակվի, այդ բարբարոս և ընդարձակ դաշտը անախորժ բուերու վայր մը դարձած տեսնելու դժբախտությունն պիտի ունենանք։[1] «Վաճառականը կդադրի, երկրագործը կդադրի, արվեստավորը կդադրի, բանվորը կդադրի, մեկ խոսքով՝ ամենքը կդադրին և Հայաստան կմնան շատ տեղ միայն ծերեր, կիներ, մանկունք», -գրում էր Մ. Մամուրյանը 1881 թվականին։ Գանգիտության հարցի վերաբերյալ «Արժենիան» 1889 թվականին գրում էր. «Մուշի, Վանի, Բիթլիսի և Էրզրումի հայ գյուղացիք քառասուն տարիե ի վեր կպանդխտին։ Հորումե հետե շոգենավը տեսավոր երկրներ մոտեցուց Հայաստանի մերձավոր նահանգներին՝ Տրապիզոնին, ալ մեր գյուղացիք թոչնոց նման երամներ կազմելով աշխարհներ այց ելնել սկսանք։» Կ. Պոլսի հայ պատրիարքարանի տվյալների համաձայն՝ միայն Կ. Պոլսում սեպագրած աշխատանքով զբաղվող հայ պանդուխտների թիվը 1870-ական թվականների վերջերին կազմում էր 30.000 մարդ։[2] Դյուղի աղքատացման պրոցեսը Արսեն Թոխմախյանը կապում էր քաղաքների հետ։ «Որքան որ գյուղերը մոտ են քաղաքներին,—գրում էր նա,—այդ չափով էլ ավելի խիստ ենթարկված են քաղաքացոց հարստահարությանց և ավելի շատ աղքատ են։»[3]

Առևտրա-փոխանակային հարաբերությունների զարդացման հետևանքով հայ առևտրական կապիտալն ուժեղացավ Վանում, Իրզրումում, Բայազետում և Արևմտյան Հայաստանի այլ կենտրոններում։ Սակայն հայ առևտրական բուրժուազիան գործում էր գլխավորապես Արևմտյան Հայաստանից դուրս՝ Կ. Պոլսում ու Թյուրքիայի ծովափնյա մյուս քաղաքներում։[4] Մեռ այսպես հետաքրքրող տարիներին՝ 1860—1880 թվականներին Արևմտյան Հայաստանում չստեղծվեցին արդյունաբերական քիչ թե շատ աչքի ընկնող ձեռնարկություններ, չկազմակերպվեց արդյունաբերական բուրժուազիա։ Սակայն, այնուամենայնիվ, երկրի տնտեսության մեջ առաջ եկան իրենց էությամբ կապիտալիստական պրոցեսներ, որոնք սկսեցին, թեև թույլ և դանդաղ կերպով, քայքայել բնատնտեսությունը և ճեղքեր բացել ֆեոդալական տիրող կարգերի մեջ։

Ապրանքա-փոխանակային հարաբերությունների զարգացման հետևանքով ավելացավ արևմտահայ գյուղացիությունից կանձվող հարկերի չափը։ Հարկերի այն քանակը, որ նա վճարում էր 1840 1850 թվականներին, մի քանի անգամ ավելացավ մեզ այստեղ հետաքրքրող շրջանում։ Հարկերի չափը ավելացրին և՛ թյուրքական կառավարությունը, և՛ քյուրդ խաֆիրները։ Այսպես, օրինակ, 1830 1850-ական թվականներին աշարը ստացվում էր միայն ցորենից ու գարուց, իսկ երկրագործական մյուս արտա-

[1] «Հանդես գրական և գեղագիտական», գիրք Ա. Մոսկվա. 1888 թ., էջ 225.

[2] Մ. Մամուրյան, «Անկլիական նամականի կամ հայու մը հակառագիրը», Զմյուռնիա, 1881 թ., էջ 20։ Մամուրյանը, ինարկե, չափազանցում էր փաստերը։

[3] «Արժենիա», Մարտեյլ, 1889 թ., № 3.

[4] Ա. Թոխմախյան, «Մասիս լեռների հարավային սարոնները», Թիֆլիս, 1882 թ., էջ 14—17.

[5] «Մրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանյան Հայաստանի», Կ. Պոլիս, 1878 թ., էջ 28.

[6] Հ. Դ Մրմրյան, «Թյուրքահայոց հին վաճառականությունը և վաճառականք», Կ. Պոլիս, 1909 թ., էջ 44—45.

գրանքների վրա չէր տարածվում։ Այգիները, բանջարանոցները նույնպես ազատ էին աշարից։ Չկային ճանապարհային, ժենավաճառության և այլ հարկեր։ Ավելին, 1835 թվականին զինվորական տուրքը սահմանված էր 15 դահեկան, 1870-ական թվականների վերջերին՝ տարեկան 37,5 դահեկան։ 1840–1850 թվականներին աշարը կազմում էր երկրագործական արդյունքի $^1/_{10}$-ը, իսկ 1890-ական թվականներին՝ $^1/_{10}$-ը։ 1870-ական թվականներին յուրաքանչյուր ոչխարի կամ այծի համար վճարվում էր մեկ դահեկան, իսկ 1890-ական թվականներին՝ 4,5 դահեկան։[1]

Սուլթանական կառավարության կողմից դանձվող ծանր հարկերը մի կողմից, քյուրդ և թյուրք բեգերի, աղաների և դերեբեյների անլուր հարստահարությունները մյուս կողմից, ինչպես նաև՝ ապրանքափոխանակային հարաբերությունների զարգացման հետևանքով առաջացած վաշխառուական կապիտալը տնտեսական խիստ ծանր կացություն էին ստեղծում Արևմտյան Հայաստանի գյուղացիության համար։ Գյուղացիական հոծ զանգվածներն ապրում էին քայքայման և աղքատացման պրոցես։ Որոշ գավառներում գյուղացու աղքատությունը հասնում էր ծայր աստիճանի։ Մ. Խրիմյանը 1871 թվականին, երբ նա վարում էր Կ. Պոլսի հայ պատրիարքի պաշտոնը, ազգային ժողովում Արևմտահայաստանի գավառների գրության մասին արտասանած իր ճառերից մեկում ասում էր. «Այնպիսի տեղեր գտնված եմ, ուր մեռնող մարդուն համար քանի մը կանգուն կտավ չգտնվեցավ և քիչը մը խոտի մեջ պատեցին խեղճ մարդուն ու թաղեցին։ Դուք տեսեր եք այնպիսի խեղճ կին, որ իր զավակին պատանք չգտնա և իր պատռտած հագուստեն կտոր մը պատռե ու զավակը պատանե»։[2]

Ինքնին հասկանալի է, որ Արևմտյան Հայաստանում տիրող իրադրության մեջ գյուղացիական մասսաների առաջ օբիկտիվորեն գրված էր սոցիալ-տնտեսական մի հիմնական խնդիր. վերացնել ֆեոդալիզմը, ազատվել ճորտական և կիսաճորտական վիճակից։ Հակաֆեոդալական, բուրժուա-դեմոկրատական բովանդակություն ունեցող այդ հարցն էր, որ հուզում էր արևմտահայ գյուղացիությանը։ Եվ իսկապես այդ հարցի լուծման ուղղությամբ էլ ընթանում էր նրա սոցիալ-դասակարգային պայքարը։ Սակայն, ինչպես կտեսնենք հետագայում, սոցիալ-դասակարգային այդ պայքարն

---

1 Գ. Խաժակ, «Հարկերը Տաճկահայաստանում», Բաքու, 1903, էջ 93–95։

2 Այժմ միայն զարմանքով կարելի է կարդալ մեր բանաստեղծներից մեկի խիստ անհեղինակ այն հոդվածը, ուր փորձ է արվում ցույց տալ, որ «Թյուրքահայ գյուղը նախապատերազմական շրջանում (այսինքն մինչև 1877–1878 թ. թ.։ Մ. Ն.) բավական ուժեղ նյութական բազա է ունեցել (տես «Նորք», Երևան, 1926 թ., գիրք Ա, էջ 163)։ Անկասկած է, որ այդ պատերազմից հետո գյուղացիության անտեսական դրությունը ծանրացավ, բայց որ մինչ այդ էլ արևմտահայ գյուղացիությունն ապրում էր ծանր, ազքատ վիճակում, այդ ես ակնհայտ է։ Այս բանում համոզվելու համար բավական է ծանոթանալ ժամանակի մամուլին, ուր բերված են մեր միտքն ապացուցող հարյուրավոր և հազարավոր օրինակներ։ Ընդհանրապես պետք է ասել, որ գրականության մեջ արտահայտվել է միանգամայն կեղծ այն պնդումը, թե մինչ 1877–1878 թվականների ռուս-թյուրքական պատերազմը արևմտահայերի դրությունը բարվոք է եղել և թե միայն այդ պատերազմից հետո է, որ սկսվում են հալածանքներ ու ճնշումներ հայերի նկատմամբ։ Բնորոշ է, որ այս տեսակետի հեղինակներից մեկը ոչ անհայտ Ջամալ փաշան է՝ 1914–1916 թվականների հայկական ջարդերի կազմակերպիչներից մեկը («Записки Джемаль паши», Тифлис, 1922).

3 «Աբեղնագրություններ ազգային ժողովոյ», Կ. Պոլիս, 1871 թ., էջ 898։

արևմտահայ իրականության մեջ անխուսափելիորեն ստանում էր ազգային-ազատագրական պայքարի ձև։

1860—1880 թվականների հայ իրականության պատկերը չի կարելի ասել առանց խոսելու այն ազգային հնչումների մասին, որոնց ենթակա էր ինչպես Արևմտյան, այնպես էլ Արևելյան Հայաստանը։ Ցարիզմի ազգային-գաղութային քաղաքականությունը Արևելյան Հայաստանում, ինչպես և ամբողջ Անդրկովկասում, արտահայտվեց հետևյալ հիմնական ուղղություններով. 1. Արևելյան Հայաստանը դարձնել տնտեսական շահագործման օբյեկտ, գլխավորապես հումքի մատակարարող երկիր։ 2. Արևելյան Հայաստանում ստեղծել ռուսական գաղութներ։ 3. Արգելակել, խափանել հայ ժողովրդի կուլտուրական զարգացումը։ Ցարիզմը իր ազգային-գաղութային այս քաղաքականությունն իրականացնող միջոցառումները սկսեց կիրառել սկզբից ևեթ՝ Արևելյան Հայաստանը Ռուսաստանին միացնելու առաջին իսկ տարիներից։ Սակայն այդ միջոցառումները խստացան և ցարիզմի ազգային քաղաքականությունը զգալի չափով ուժեղացավ 1880-ական թվականներին։ Նարոդովոլեցների 1881 թ. մարտի 1-ի տեռորիստական ակտից հետո գահ բարձրացած Ալեքսանդր III, հենվելով իր ռեակցիոն մինիստրներ Պոբեդոնոսցևի, Տոլստոյի վրա արշավանք սկսեց ոչ միայն ռուսական ռևոլյուցիոն-դեմոկրատական տարրերի ու հոսանքների, այլև կայսրության մեջ ընդգրկված փոքր ազգությունների դեմ։ Ռուսական մեծապետական շովինիզմը ավելի մարտական բնույթ ստացավ։ Նոր հալածանքներ սկսվեցին հայ ինտելիգենցիայի նկատմամբ, խիստ հսկողության տակ առնվեց պարբերական մամուլը, խստացավ գրաքննությունը։ Կուլտուրակրթական և բարեգործական ընկերությունները դիտվեցին որպես կասկածելի կազմակերպություններ. պետական պաշտոններից հեռացվեցին բազմաթիվ հայ գործիչներ։ Սակայն ցարական կառավարությունը առանձնապես խիստ հարձակում կատարեց հայ դպրոցների դեմ։ Համարելով այդ դպրոցները որպես հայկական կուլտուրայի զարգացման, ժողովրդական լուսավորության և ազգային ինքնաճանաչության գլխավոր օջախներ, ցարական կառավարությունը որոշեց ոչ միայն թույլ չտալ հայկական դպրոցների ցանցի հետագա զարգացումը, այլև փակել եղածները։ Այս հարցը ցարական մինիստրների հատուկ քննության առարկա դարձավ 1883 թվականին։ Հաջորդ տարին այս խնդրով զբաղվեցին ներքին գործոց մինիստր գրաֆ Դիմիտրի Տոլստոյը, լուսավորության մինիստր «հայագդի» Դելյանովը և Կովկասի այն ժամանակվա կառավարչապետ իշխան Ա. Ռոնդուկով-Կորսակովը։ Սրանք հայկական դպրոցների համար 1884 թվականի փետրվարի 16-ին ընդունեցին մի կանոնադրություն, որը մեծ չափով սահմանափակում էր հայկական դպրոցների ցանցը և զրկում էր այդ դպրոցները իրենց ազգային դեմքից։ Այդ կանոնադրության համաձայն՝ հայկական դպրոցների մեծ մասը պետք է դրվեր խզճուկ վիճակի մեջ և պիտի առնվեր ցարական կառավարության անմիջական և ուժեղ հսկողության տակ։ Փետրվարի 16-ի կանոնադրությունը, սակայն, հանդիպեց մեծ դիմադրության։ Հայկական դպրոցների ղեկավարությունը, այդ թվում և Էջմիածնի կաթողիկոսությունը, որի իրավասության տակ էր գտնվում դպրոցների մեծ մասը, հրաժարվեց ի կատար ածել պետական օրենքի ուժ ունեցող այդ կանոնակարգությունը։ Ցարական կառավարությունը դիմեց բռնի միջոցների։

1885 թվականի մարտին տրված հատուկ հրամանի համաձայն՝ ցարական ոստիկանությունը բռնի կերպով փակեց մոտ հինգ հարյուր դպրոց, փողոց շպրտվեց երեսուն հազարի չափ երկսեռ աշակերտություն։[1]

Մեզ այստեղ հետաքրքրող շրջանում ուժեղացավ ցարիզմի գաղութարար (կոլոնիզացիոն) քաղաքականությունը։ Ցարական կառավարությունը ռուսական նոր գյուղեր հիմնեց ինչպես ամբողջ Կովկասում, այնպես էլ Արևելյան Հայաստանում։ 1898 թվականին արդեն Երևանի նահանգում գոյություն ունեին 11, իսկ Կարսի մարզում՝ 19 ռուսական գյուղեր։ Ճանապարհաշինարարության շնորհիվ ցարական կառավարությունը 1860—1870-ական թվականներից սկսած նոր հնարավորություններ ստացավ Անդրկովկասը տնտեսական շահագործման ենթարկելու համար։ Դրա հետևանքով 1860—1880-ական թվականներին զգալի չափով ուժեղացավ նաև ցարիզմի՝ Անդրկովկասի տնտեսական շահագործման ուղղությամբ արտահայտվող գաղութային քաղաքականությունը։[2]

Այլ պատկեր և այլ իմաստ ուներ ազգային ճնշման, հալածանքի ու հարստահարության այն քաղաքականությունը, որ վարում էր սուլթանական Թյուրքիան Արևմտյան Հայաստանում՝ հայ ժողովրդի նկատմամբ։ Ինչպես մինչև 19-րդ դարի երկրորդ հիսնամյակը, այնպես էլ մեզ այստեղ հետաքրքրող շրջանում սուլթանական բռնապետության տիրապետության տակ գտնվող հայ ժողովուրդը ենթարկվում էր բիրտ ու անլուր ճնշումների, հալածանքների ու կեղեքումների։ Թյուրք սուլթանները ինչպես քրիստոնյա բոլոր ժողովուրդներին, այնպես էլ հայ ժողովրդին դիտում էին որպես կեղեքման, շահագործման առարկա։ Առաջնորդվելով «սրբազան շարիաթի» սկզբունքներով, մուսուլմանները հայերին, որպես քրիստոնյաների, համարում էին ռայա, ոչխարի հոտ, որին պետք է կթել ու խուզել։ Հայը երկրի, պետության իրավազոր քաղաքացի չէր։ Նրա վկայությունը դատարանում չէր անցնում,[3] նա տալիս էր ավելի շատ հարկ, նա իրավունք չուներ զենք կրել, օրենքը չէր ապահովում հայերի, որպես քրիստոնյաների, կյանքը, գույքը և պատիվը։ Հայը մշտապես ենթակա էր բռնություններին ու հարստահարության, ոտնահարվում էին նրա արժանապատվությունը և նվիրական զգացմունքները, նա մշտապես ստանում էր բարոյական հարվածներ։ Ոչ 1839 թվականի Խաթը-Շերիֆը և ոչ էլ 1856 թվականի Խաթը-Հյումայունը չփոխեցին դրությունը։ Ղրիմի պատերազմի տարիներին

---

[1] «Արևելք», 1885 թ. Նոյեմբեր 12։

[2] Եթե 1850 թվականին Անդրկովկաս էր ներմուծվում ապրանք (գլխավորապես ֆաբրիկատ) 3.809.983 ռուբլու արժողությամբ, ապա 1875 թվականին՝ 8.973.860 ռուբլու արժողությամբ։ 1850 թ. Անդրկովկասից արտահանվել է (գլխավորապես հում նյութ) 3.835.350 ռուբլու արժողությամբ, 1875 թվականին՝ 6.262.152 ռուբլու արժողությամբ։ Նշված ներմուծման և արտահանման մեջ վճռական դեր էր խաղում ռուսական բուրժուազիան (*Н. Шавров.* Обзор производительных сил Кавказского наместничества за 1879 г., Тифлис. 1880, էջ 345)։

[3] 1870-ական թվականների սկզբներին Արևմտյան Հայաստանում ատանագործություն կատարած մի հոգևորական գրում էր. «Գյուղի մեջ, շուկայի մեջ, առն մեջ, ուր ըլլա ոչ մահմեդական մը, կծեծվի, կնախատվի և այլն։ Դատարան դիտի երթան, ով դիտի վկայի. անանող մահմեդականք չեն երթա վկայելու, ոչ մահմեդականի վկայությունը ալ չըլլանիր, դատը ինքնին կկորուսի» (ՀՍՍՌ Մատենադարան, ձեռագիր № 4179, էջ 261)։ Նկատենք, որ այս ձեռագրում կան հարուստ տվյալներ արևմտահայ ժողովրդի տնտեսական ու իրավական խիստ ծանր վիճակի մասին։

Արեմտյան Հայաստանում եղած ռուս գեներալ-մայոր Լիխուտինը հայերի մասին գրում էր. «Նրանք իրավունք չունեն զենք կրել, մինչդեռ բոլոր մուսուլմանները դինված են և այդ պատճառով վերջիններս նրանց միշտ գրեթե անպատիժ կերպով վիրավորում են։ Ես տեսա մի քանի հայեր կարված ականջներով և քթերով, մի բան, որ արված էր ոչ թե գատարանով, այլ կամայականորեն, այս կամ այն ազդեցիկ ու հարուստ գյուղապետի (մուսուլման) կամ սեղական դատատանի անդամի կողմից։ Նրանք [հայերը] ժառապես գանվում էին ատգնապի մեջ, ունեին ահարեկվածի տեսք»։[1]

Արևմտյան Հայաստանում 1880—1890-ական թվականներին տիրող դրության մասին էմ. Դիլոնը ասում էր. «Հայկական հինգ գավառներում հաստատված է կառավարման գագանային սիստեմ, որի հետ համեմատած, տարավային շատաների ստրկական սիստեմի դաժանությունները հանդիսանում են միայն որպես աննշան չարաշահություններ»։[2] Գ. Սրվանձտյանը Մուշի դրությունը պատկերում էր հետևյալ բառերով. «Ընդակներու հարձակում, արյան հոսում, ընչից ավար, ընտանյաց բռնարարություն, եկեղեցոց կողոպտում, օրինաց եղծում, կենաց դրավում...»։[3] 1890 թվականին Մակար կաթողիկոսին ուղարկած իրենց նամակում արեմտահայերը գրում էին. «Ոչ մարդկային լեզուն և ոչ ալ նորա գրիչը չեն կարող նկարագրել այս բառատեսակ ծանր դժբախտությունը, որ կրած ենք և կկրենք։ Մեր հայրենի տոգի վրա մեր կյանքը խաղալիք է դարձած մեր իշխողներու ձեռքին, մեր կյանքը անապահով դրությանց մատնված է, մեր ընտանիքը ամոթարեր բռնության, մեր գավակները զոհ են դարձած կոպիտ ուժի, մեր դառն քրտինքով վաստակած հացը մեզնե կորզելու, մեր գավակներն սովամահ կոտորելու ենթարկված են. մեր եկեղեցիները կսրբապղծվեն և հրոհարակ կլինին, մեր սրբությունները կանարգվին և մեր հավատը կհայհոյվի և հոգևորականությունը ենթարկված է հինգերորդ դարում տեղի ունեցած բոլոր տառապանաց»։[4] «Թյուրքիայի 19-րդ դարի պատմությունը,—գրում էր իրավագիտորեն Ա. Չիվելեգովը,—գերազանցապես քրիստոնյաների հալածանքի պատմություն է»։[5] Ահռելի կերպարանք ստացած այդ հալածանքների ու հարստահարությունների մասին պերճախոս փաստեր հրապարակվեցին ժամանակի մամուլի և հատկապես Կ. Պոլսի հայ պատրիարքարանի հրատարակած այն տեղեկագրերի մեջ, որոնք նվիրված էին գավառական հարստահարություններին։

Ոչ միայն Արևմտյան Հայաստանում կիրառվող ազգային ճնշումներն ու հալածանքները 19-րդ դարի երկրորդ կեսին և մասնավորապես 1877—

---

[1] М. Лихутин. Русские в Азиатской Турции в 1854—1855 годах, Спб., 1863, էջ 166։

[2] Эм. Диллон и Фр. Грин. Положение дел в Турецкой Армении и турецкие зверства в Сасуне. Москва, 1896, էջ 3։

[3] «Արծվիկ Տարոնոյ», 1864, № 1։ Այդ նույն հոդվածում հեգնելով «Փոփուկ ազգաներ» արեմտահայ սահմանագրականներին, Սրվանձտյանը գրում էր. «Ի՞նչ սահմանագրություն, ի՞նչ քաղաքական խորհուրդ, ի՞նչ ազգային ժողով, ի՞նչ առաջնորդ։ Պատակ չեխերու հրամանով կլինի, քանանայից իշխան սոքա են և վարիչ... Սորա են երկրի առաջնորդ, գատավոր և այլն» (նույն տեղ)։

[4] ՀՍՍՌ Մատենադարան, Արխիվ, կաթողիկոս. դիվան, 1890 թ., թղթապանակ 236, փաստաթուղթ № 48։

[5] „Русская мысль", 1901, кн. 2-я, էջ 114։

1878 թվականների ռուս-թյուրքական պատերազմներից հետո անհամեմատ ավելի խստացան և նոր կերպարանք ստացան։ 1850-ական թվականներից հետո սուլթանական կառավարությունն առանձին ուշադրություն դարձրեց Արևմտյան Հայաստանի վրա և հատուկ քաղաքականություն վարեց արևմտահայերի նկատմամբ։ Ձենք սխալվի, եթե ասենք, որ սուլթանական կառավարության՝ մինչև 1850-ական թվականները վարած ազգային ճնշման ու հալածանքի քաղաքականությունն այն չէր, ինչ նա դարձավ 1860-ական թվականներից սկսած։ Ի՞նչ նորություններ էր բերում սուլթանական կառավարության ազգային քաղաքականությունը հայերի համար 19-րդ դարի երկրորդ կեսին։ Ամենից առաջ սուլթանական կառավարությունը կտրուկ միջոցներ էր ձեռք առնում կիսանկախ հայկական Զեյթունի և Սասունի դեմ։ Եթե նախընթաց շրջաններում հանդուրժվում էր այդ կիսանկախությունների գոյությունը, ապա այժմ՝ 19-րդ դարի երկրորդ կեսին վերանում է այդ հանդուրժողական վերաբերմունքը, և սուլթանական կառավարությունը հարձակման էր անցնում նրանց դեմ։ Այնուհետև թյուրքական իշխանությունն ամեն կերպ ձգտում էր խախտել արևմտահայերի հավաքական գոյությունը, աշխատում էր ցրել հայությունը մահմեդական ծովի մեջ։ Այս նպատակն իրականացնելու համար սուլթանական կառավարությունը կատարեց վարչական մի շարք ռեֆորմներ և Արևմտյան Հայաստանում բնակեցրեց Բալկաններից ու Կովկասից Թյուրքիա գաղթած բազմահազար մահմեդական բնակչություն։ Սուլթանական իշխանությունն ամեն հնարավոր ձևով սկսեց սրել հայերի ու քրդերի, հայերի ու ներգաղթած չերքեզների հարաբերությունները, հրահրեց քրիստոնյա հայերի ու մահմեդականների թշնամությունը։ Սուլթանական կառավարությունն աննախընթաց հալածանքներ սկսեց հայ մամուլի, գրականության, հայկական բարեգործական ու կուլտուր-կրթական ընկերությունների դեմ, ծիծաղելի աստիճանի հասան գրաքննության խստությունները։[1] Վերջապես՝ մեզ այստեղ հետաքրքրող շրջանում՝ 1860-1880 թվականներին պետական ծրագրեր կազմվեցին և գործնական քայլեր արվեցին հայկական ջարդեր կազմակերպելու ուղղությամբ։[2] Բնական է, որ սուլթանական կառավարության այս նոր

---

[1] 1880-ական թվականներին թյուրքական գրաքննությունն արգելեց գործածել հետագնդում. արիություն, ազատություն, ուժ, իրավունք, միություն, հավասարություն, ասող, թագավոր, պալատ, գենք, արյունհեղություն, բռնապետություն և այլն բառերը (տես Мак-Коль. Султан и державы, пер. с англ., С.-Петербург, 1897. էջ 291)։

[2] Ահա երկու օրինակ. ա) 1876 թ. դեկտեմբերի 1-ին թյուրք կառավարության ցուցումներով տեղի ունեցավ Վանի հանրահայտ հրդեհը, բ) 1880 թ. հուլիսին Շամգիանում չեչի Արեյդուլահի դեկավարությամբ տեղի ունեցած թյուրդ չեչենների ու խալիֆների ժողովում թյուրք կառավարության անունից քրդերին առաջարկություն է արվում հայկական մեծ կոտորածներ սկսելու համար։ Այդ առաջարկը սակայն, մերժվում է (տես՝ Полковник Карцов. Заметки о курдах. Тифлис, 1896, էջ 181)։ Թյուրքական կառավարությունը գեռես 1870-ական թվականների վերջերին աշխատել է ոտքի հանել քրդերին հայկական կոտորածներ սարքելու համար։ Այդ մասին հետաքրքիր տեղեկություններ է հայտնում Ա. Թոխմախյանը, որը Արևմտյան Հայաստանում կատարած իր ճանապարհորդության ժամանակ այս առթիվ դրույց է ունենում քրդական ցեղապետներից մեկի՝ հուսին աղայի հետ։ Վերջինս դիմելով Թոխմախյանին, ասում է. «Ձեր խնդիրը (հայկական հարցը։ Մ. Ն.) երեսուն գալուց գկնի (Բեռլինի կոնգրեսից հետո։ Մ. Ն.) թյուրքերը մեծ բարեկամություն սկսեցին ցույց տալ մեզ և մեր ձեռքով կամենում էին կրակ բռնել։ այդ աշխարհը որբել հայերից։ Դրա համար շատ մեծ գաղտնի աշխատություններ են եղել և լինում են։» (Ա.

քաղաքականության հետևանքով ավելի ու ավելի էին խստանում ազգային ճնշումները, հալածանքները ու բռնությունները հայ բնակչության նկատմամբ։ Ինչով բացատրել այն հանգամանքը, որ սուլթանական կառավարությունը 1850-ական թվականներից սկսած ուժեղացրեց ազգային ճնշման ու հալածանքի իր քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում և ընդհանուր հարձակման անցավ արևմտահայերի վրա։ Մենք կարծում ենք, որ այս երևույթը բացատրվում է հետևյալ չորս պատճառներով։

1. Մինչև 1860-ական թվականները՝ 19-րդ դարի ամբողջ առաջին կեսի ընթացքում Արևելյան փաշայությունների (Արևելյան Անատոլիայի) հետ կապված ամենահիմնական հարցը, որ զբաղեցնում էր թյուրքական կառավարությանը, քրդական ցեղերի անկախ և կիսանկախ դրության վերացման հարցն էր։[1] Թյուրքական կառավարությունը ձգտում էր իրեն ենթարկել քրդական աշիրեթությունները, որոնք այն ժամանակ հանդիսանում էին ամենախոշոր և ամենավտանգավոր կենտրոնախույս ուժերը արևելյան փաշայություններում։ Եվ սուլթանները զգալի հաջողություններ ունեցան այդ ուղղությամբ։ 1834 թվականին Մահմեդ Ռեշիդ փաշայի բանակը, որ կազմված էր արաբական զորքերից ու նոր էր վերադարձել Եգիպտոսից, ծանր հարված հասցրեց Բայազեդի ու Վանի գավառների քրդական ապստամբ ցեղերին։ Երկրորդ մեծ հարվածը տրվեց 1845—1846 թվականներին, երբ քրդական ցեղերը թյուրքական կառավարության դեմ ապստամբություն բարձրացրին Բադիր խանի ղեկավարությամբ։ Այս ապստամբությունը ամենայն խստությամբ ճնշվեց Մուսուլի, Դիարբեքիրի, Վանի և Էրզրումի փաշաների միացյալ ուժերով։[2] Քրդական վերջին խոշոր ապստամբությունը տեղի ունեցավ Ղրիմի պատերազմի ժամանակ՝ 1854—1855 թվականներին, Եզդանշիրի գլխավորությամբ։ Քրդական շարժումը հսկայական ծավալ ընդունեց, սակայն վերջիվերջո ճնշվեց ամենայն խստությամբ։[3] Եզդանշիրի ապստամբության ճնշումից հետո այլևս տեղի չունեցան հակասուլթանական նոր խոշոր շարժումներ։ Քրդական ցեղերը հպատակվեցին թյուրքական կառավարությանը, վերացավ այն անկախ վիճակը, որ մինչ այդ ունեին քրդերը։ Ճիշտ է, 19-րդ դարի ամբողջ երկրորդ կեսի ընթացքում ևս քրդական որոշ ցեղեր թույլ կերպով էին կապված սուլթանական կառավարու-

Թումախյան. «Մասիս լեռների հարավային սարահարները», Բ մաս, Հրապարակախոսություն, Թիֆլիս, 1882, էջ 31)։ Մ. Երիմյանը 1877 թ. գրում էր. «Տերությունը զբաղվում է դեն կկոչե» («Հայդուկ», Կ. Պոլիս, 1877, էջ 13)։ «Արձագանք»-ի հոդվածագիր Ա. Խաչատրյանը 1883 թ. գրում էր. «Մի հայանի փասա է, որ թյուրք կառավարությունը ամենայն ջանք դրած է դնում Տաճկահայաստանում եղած հայ տարրը նվազեցնելու համար։ Վերջին ժամանակները նորա առանձին ուշադրությունը այս տեսակետից դարձրել է յուր վրա Հին Բայազեդի փաշայությունը» («Արձագանք», 1883 թ., № 3)։

[1] Ինչպես վկայում է Մալկոլմը, 19-րդ դարի սկզբներին Արևմտյան Հայաստանի տերիտորիայի վրա ապրող քրդական գրեթե բոլոր ցեղերն էլ անկախ էին (տես՝ *Malcolm's*, History of Persia (modern), 1888, էջ 72—73։

[2] Полковник *Карцов*. Заметки о курдах. Тифлис, 1896. էջ 15. հմմտ. *Пропмтер*. Мало-Азиатские курды. Тифлис, 1886, էջ 24։

[3] *П. И. Аверьянов*. Курды в войнах России с Персией и Турцией в течение XIX столетия. Тифлис, 1900. էջ 81—82։

[4] *М. Лихутин*. Русские в Азиатской Турции в 1854 и 1855 годах. Спб., 1863, էջ 256. հմմտ. Акты, собранные Кавк. археологич. ком. т. XI. Тифлис, 1888, էջ 335։

թյան հետ և երբեմն կիսանկախ վիճակ էին ստեղծում իրենց համար, սակայն այդ արդեն որևէ լուրջ վտանգ չէր ներկայացնում թյուրքական կառավարության համար։ Բրդական ցեղերն ընդհանուր առմամբ ընդունում էին թյուրք սուլթանների գերիշխանությունը։ Ավելին։ Նրանք կույր գործիք էին դառնում սուլթանական կառավարության ձեռքին։[1] Այսպիսով՝ քրդական ապստամբ ցեղերի հետ կապված այն հարցերը, որոնք խիստ մտահոգում էին թյուրքական կառավարությանը 19-րդ դարի առաջին կեսին, այլևս գոյություն չունեին նույն դարի երկրորդ կեսին։ Այս հանգամանքը խոշոր աղդեցություն ունեցավ արևմտահայ ժողովրդի նկատմամբ սուլթանական կառավարության վարած քաղաքականության վրա։ Քանի դեռ լուծված չէր քրդական հարցը և չէին ճնշվել քրդական շարժումները, սուլթանական կառավարությունը հատուկ և ակտիվ քաղաքականություն չէր վարում արևմտահայերի նկատմամբ։ Արևմտահայ ժողովրդի տնտեսական ու իրավական վիճակը նույնն էր, ինչ որ ուներ ռայան ընդհանրապես օսմանյան կառավարության մնջ։ Բնորոշ է, օրինակ, որ Բաղիր խանի 1845—1846 թվականների քրդական ապստամբության ժամանակ Վասպուրականի հայ բնակչությունն օգնում է թյուրքական կառավարությանը և գործուն մասնակցություն է ունենում քրդական այդ ապստամբությունը ճնշելու գործում։ Բնորոշ է նաև այն, որ, ինչպես հայտնում է Մոլտկեն, 1830-ական թվականներին թյուրքական զորքերի գլխավոր հրամանատար Հաֆի փաշան ծրագիր էր կազմում թյուրքական կանոնավոր զորքերի շարքում ընդունել հայերին։[2] Այս շրջանում թյուրքական կառավարությունն առանձին ուշադրություն չէր դարձնում արևմտահայերի վրա։ Սակայն դրությունը փոխվում է 1850-ական թվականներից հետո։ Հիմնականում լուծած լինելով քրդական խնդիրը, սուլթանական կառավարությունն իր հարվածներն ուղղում է արևմտահայության դեմ։

2. Արդեն 1840—1850-ական թվականներին ազգայնական ծրագրերով հանդես եկավ թյուրքական բուրժուազիան։ Նրա հիմնական նշանաբաններն էին՝ անձեռնմխելի պահել թյուրքական կայսրության ամբողջականությունը, վճռական միջոցներ ձեռք առնել քրիստոնյա ժողովուրդների քաղաքական-ազատագրական շարժումների դեմ և թյուրքական կայսրությունը դարձնել թյուրքերի երկիր։ Թյուրքական բուրժուազիայի այս քաղաքական ծրագրերի իրականացման համար 1868 թվականին ստեղծվեց «ԻԹԹիհատ» կազմակերպությունը, որի հիմնադիրներն էին «ժոլի թյուրքեր, ժոլի նացիոնալիստներ»։[3] ԻԹԹիհատը առաջադրեց «Թյուրքիան թյուրքերին» լոզունգը, լայնորեն ծավալեց համիսլամականության և համաթրքության գաղափարների պրոպագանդան, բացահայտ կերպով քարոզեց քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում և հայ ժողովրդի սիստեմատիկ բնաջնջման անհրաժեշտությունը

[1] Թյուրքական կառավարությունն օգտագործում էր քրդերին հայկական կոտորածներ կազմակերպելու համար, բայց հաճախ քրդերի անվան տակ գործում էր թյուրքական կանոնավոր զորքը։ Այս երևույթն առանձնապես աչքի ընկավ Սասունի 1894 թվականի կոտորածների ժամանակ (տես՝ E. A. Bravley Hodgetts. Round abaut Armenia. London, 1896, էջ 100)։

[2] *Helmuth* von *Moltke*. Briefe über Zustände und Begebenheiten in der Türkei aus den Jahren 1835 bis 1839. Berlin, 1877.

[3] „История XIX века" под ред. Лависса и Рамбо. т. VI, Москва, 1938, էջ 121

և այլն։ Թյուրքական բուրժուազիայի ու նրա քաղաքական կազմակերպության այս պահանջները, իհարկե, հաշվի առավ սուլթանական կառավարությունը, իսկ Աբդուլ Համիդը, որ գահ բարձրացավ 1876 թվականին, ամենայն հետևողականությամբ սկսեց կիրառել Իթթիհատի ծրագիրը։[1]

3. 19-րդ դարի առաջին հիսնամյակի ընթացքում Եվրոպական Թյուրքիայում տեղի ունեցած սլավոնական ժողովուրդների ազատագրական շարժումները, ապա Հունաստանի, Սերբիայի և Դանուբյան իշխանությունների անջատվելն ու ազատագրումը Թյուրքիայից՝ խիստ վախի մեջ էր գցել սուլթանական կառավարությանը։ Վերջինս այդ վախի ազդեցության տակ որոշում է ընդունում կտրուկ միջոցներ ձեռք առնել Ասիական Թյուրքիայի քրիստոնյա ժողովուրդների նկատմամբ, որպեսզի սրանք չհետևեն բալկանյան քրիստոնյաների օրինակին։ Որքան ուժեղանում էին Եվրոպական Թյուրքիայի քրիստոնյա ժողովուրդների հակասուլթանական ազգային-ազատագրական շարժումները, այնքան խիստ միջոցներ էին ձեռնարկվում Ասիական Թյուրքիայի քրիստոնյա ժողովուրդներին, այդ թվում նաև հայ ժողովրդի նկատմամբ։ Սուլթանական կառավարության վախն ավելի էր ուժեղանում և դրա հետևանքով ասիական քրիստոնյաների նկատմամբ խիստ միջոցներ էին ձեռնարկվում նաև այն պատճառով, որ 1850-ական թվականներին և մասնավորապես Ղրիմի պատերազմին հաջորդող Փարիզի դաշնագրից հետո արանսիան բավական ակտիվ, կարելի է ասել, ագրեսիվ քաղաքականություն էր վարում Մերձավոր Արևելքի նկատմամբ։

4. 1860-ական թվականների սկզբներից հակասուլթանական. ազգային-ազատագրական շարժման մի նոր ալիք սկսվեց արևմտահայ իրականության մեջ։ Այս բանը չէր վրիպում սուլթանական կառավարության ուշադրությունից։ Հայ ազգային-ազատագրական այդ շարժումը ճնշելու և նրա հետագա զարգացումը կանխելու նպատակով Թյուրքական սուլթանները ձեռնարկում էին խիստ ու դաժան միջոցառումներ։

Մենք թվեցինք այն հանդամանքները, որոնք պայմանավորեցին հայերի նկատմամբ սուլթանական կառավարության կողմից 19-րդ դարի երկրորդ կեսին կիրառվող ազգային ճնշման քաղաքականությունը։ Իհարկե, այդ քաղաքականությունը բոլորովին նոր չէր։ Նրա տարրերը մենք տեսնում ենք 19-րդ դարի առաջին կեսին և նախընթաց շրջաններում։ Թյուրք սուլթանների բիրտ օրենքները մշտապես անլուր հալածանքների ու հարբսահարությունների աղբյուր են հանդիսացել ինչպես քրիստոնյա բոլոր ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի համար։ Իսայց այնուամե-

[1] Հիստ բնորոշ է, որ դեռևս 1860-ական թվականներին սուլթանական կառավարությունը վարում էր պետական ապարատը և ռազմական արդյունաբերական ձեռնարկությունները հայերից մաքրելու քաղաքականություն։ Այդ մասին «Համբավաբեր Ռուսիոն» հանդեսում կարդում ենք. «Դրեթե ութսուն տարին ի վեր օսմանյան պետության վառոդաշինությունը հայոց հանձնված էր, ընդ վերատեսչությամբ Տատյան ադնվատոմ գերդաստանին, Այժմ Բ. Դուռն արժան համարեր է վառոդարանի վերատեսչությունը նույն գերդաստանեն առնուլ և հայ աշխատավորաց ցով թյուրք գինվորներ դնել և նույն աշխատավորներն ստիպել, որ անոնց հետ գործեն և վառոդաշինության արհեստն ուսուցանեն անոնց, որպեսզի հետո հայերը բոլորովին տրտաքսե վառոդարանեն» («Համբավաբեր Ռուսիոն», 1863, № 48, էջ 3)։

[2] Л. Дживаелегов. Будущее Турецкой Армении. Москва. էջ 10։

նայնիվ 19-րդ դարի երկրորդ կեսում հայերի նկատմամբ սուլթանական կառավարության վարած ազգային ճնշման քաղաքականությունն ունի էական տարբերություններ նախընթաց շրջանի քաղաքականությունից, տարբերություններ, որոնք ավելի էին ծանրացնում և անհանդուրժելի դարձնում արևմտահայ ժողովրդի դրությունը։[1]

Նախընթաց էջերում մենք նշեցինք, որ Արևելյան և ավելի թույլ ձևով Արևմտյան Հայաստանը 19-րդ դարի երկրորդ կեսին ապրում էին ֆեոդալիզմի քայքայման և կապիտալիստական հարաբերությունների ձևավորման ու զարգացման շրջան։ Երկրի ներսում կատարվող սոցիալ-տնտեսական այս պրոցեսների հիման վրա տեղի ունեցավ մեզ այստեղ հետաքրքրող շրջանի հայ իրականության ամենախոշոր երևույթներից մեկը՝ հայ տզգության կազմավորումը։ Դեռևս 1913 թվականին իր «Մարքսիզմը և ազգային հարցը» հոշակավոր աշխատության մեջ Ի. Վ. Ստալինը գրում էր, թե «Վրաստանը որպես ազգ երևան եկավ միայն 19-րդ դարի երկրորդ կեսին, երբ ճորտատիրության անկումը և երկրի տնտեսական կյանքի աճումը, հաղորդակցության ճանապարհների զարգացումը և կապիտալիզմի առաջացումը աշխատանքի բաժանում հաստատեցին Վրաստանի մարզերի միջև, բոլորովին սասանեցին իշխանությունների տնտեսական ինքնամփոփությունը և նրանց կապակցեցին որպես մի ամբողջություն։[2] Այնուհետև խոսելով Արևելյան Եվրոպայի մի շարք ժողովուրդների՝ որպես ազգություններ կազմավորվելու ուրույն պրոցեսի մասին, Ի. Վ. Ստալինը գրում էր. «Այն ժամանակ, երբ Արևմուտքում ազգերը զարգացան իբրև պետություններ, Արևելքում կազմավորվեցին ազգամիջյան պետություններ, որոնք բաղկացած են մի քանի ազգություններից... Ռուսաստանում տզգերի միավորիչ գերն իրենց վրա վերցրին վելիկոռուսները, որոնց գլուխն էր կանգնած պատմականորեն կազմավորված, ուժեղ և կազմակերպված ազնվական զինվորական բյուրոկրատիան... Պետությունների գոյացման այս յուրահատուկ եղանակը կարող էր տեղ գտնել տակավին չվերացված ֆեոդալիզմի պայմաններում միայն, թույլ զարգացած կապիտալիզմի պայմաններում միայն, երբ գեպի հետին պլան քշված ազգությունները դեռևս չէին կարողացել տնտեսապես կոնսոլիդացիայի ենթարկվել իբրև ամբողջական ազգեր։ Բայց կապիտալիզմը սկսում է զարգանալ նաև արևելյան պետություններում։ Զարգանում են առևտուրը և հաղորդակցության ճանապարհները։ Աճում են խոշոր քաղաքներ։ Ազգերը տնտեսապես կոնսոլիդացիայի են ենթարկվում։ Ետ մղված ազգությունների անդորը կյանքի մեջ ներխուժած կապիտալիզմը խոովահույզ է անում այդ ազգություններին և նրանց շարժման մեջ գնում։ Մամուլի ու թատրոնի զարգացումը, ռայխսրատի (Ավստրիայում) և դումայի (Ռուսաստանում) գործունեությունը նպաստում է «ազգային զգացմունքների» ուժեղացման։ Մնունդ տուած ինտելիգենցիան տոգորվում է «ազգային գաղափարով» և

[1] Միայն գրությամբ կարելի է կարդալ թյուրքոֆիլների այն պնդումը, թե Թյուրքիայում՝ 19-րդ դարում ինչպես հայերը, այնպես էլ հույները ու սլավոնները ունեին լայն ազատություններ ու ավտոնոմիա (տես՝ Турецкий сборник., С. Петербург, էջ 83)։

[2] И. Сталин. Марксизм и национально-колониальный вопрос. Сборник избранных статей и речей. М., Партиздат, 1938, էջ 6.

այդ իսկ ուղղությամբ էլ գործում է... Բայց ինքնուրույն կյանքի համար արթնացած ետ մղված ազգերն արդեն իրրև անկախ ազգային պետություններ չեն կազմավորվում, նրանք իրենց ճանապարհին ամենաուժեղ դիմադրության են հանդիպում այն իշխող ազգերի ղեկավար խավերի կողմից, որոնք վաղուց արդեն պետության գլուխ են կանգնած, Ուժեղացել են... Այսպես կազմավորվում են իրրև ազգեր՝ չեխերը, լեհերը և ուրիշները՝ Ավստրիայում, խրվաթները և ուրիշները՝ Հունգարիայում, լատիշները, լիտվացիները, ուկրաինացիները, վրացիները, հայերը[1] և ուրիշները Ռուսաստանում»[2]

Վերև բերված քաղվածքներից երևում է, որ ընկեր Ստալինը առանձին տարբերություն չի դնում վրաց և հայ ազգությունների կազմավորման պրոցեսների միջև՝ ոչ այդ պրոցեսների սոցիալ-դասակարգային գործոնների և ոչ էլ ժամանակի տեսակետից։ Իսկ այստեղից ինքնաբերաբար պետք է հետևցնել, որ ինչպես վրաց, այնպես էլ հայ ազգության կազմավորումը տեղի է ունեցել 19-րդ դարի երկրորդ կեսին։ Պատմական փաստերը ամբողջությամբ հաստատում են այդ միտքը։ Հիրավի, ինչպես տեսանք, ազգության կազմավորման համար անհրաժեշտ նախադրյալ հանդիսացող կապիտալիստական հարաբերությունները առկա էին Հայաստանում 19-րդ դարի երկրորդ կեսին։ Դեռևս 1850—1860 թվականներին ծաղկում, զարգանում է հայ մամուլը, թատրոնը, հրապարակ է գալիս ազգային գաղափարներով տոգորված հայ ինտելիգենցիան, հայ լուսավորական շարժումը հասնում է իր զարգացման ամենաբարձր աստիճանին և վճռական հաղթանակ տանում հայ իրականության ռեակցիոն ուժերի նկատմամբ, ձևավորվում ու քաղաքացիական իրավունք է ստանում աշխարհաբար գրական լեզուն, զարգանում է նոր, աշխարհիկ գրականությունը, կատարվում են դպրոցական բարենորոգումներ, հիմնվում են գրական-կուլտուրական-կրթական մի շարք ընկերություններ և այլն։ Դժվար չէ ըմբռնել, որ 1850--60-ական թվականների կուլտուրական վերածնությունը ոչ այլ ինչ էր, բայց եթե հայ ազգության կազմավորման պրոցեսի գաղափարական, գրական-կուլտուրական արտահայտությունը։

Ազգության կազմավորման արտահայտություններից է նաև այն նշանակալից հանգամանքը, որ արդեն 1850 -60-ական թվականներին տեղի է ունենում հայության երկու հատվածների՝ արևելահայերի ու արևմտահայերի մերձեցումը։ Այդ մերձեցումն առանձնապես նկատվում էր հայ մտավորականության ու հասարակական-քաղաքական գործիչների միջև։

Հայ ազգության կազմավորումը և դրա արտահայտությունը հանդիսացող մտավոր-կուլտուրական վերածնությունն արդյունք էին, ինարկե, նախ և առաջ երկրի ներսում կատարվող սոցիալ-տնտեսական պրոցեսների։ Սակայն չի կարելի աչքաթող անել և արտաքին ազդեցությունների

---

1 Ընդգծումը իմն է. Մ. Ն.

2 И. Сталин. Марксизм и национально-колониальный вопрос. Сборник избранных статей и речей. М., Партиздат, 1938, էջ 10—11։

«Մատիկ» պարբերականը 1861 թ. հայտնում էր խիստ բնորոշ այն փաստը, թե Զմյուռնիայի հայ երիտասարդության նշանաբանն է՝ «Խոսում հետ հայրենիք» («Մատիկ», 1861 թ. № 1)։

դերը։ Ղրիմի պատերազմը (1853--1856) ու նրան հաջորդող ռևոլուցիոն սիտուացիան Ռուսաստանում, ռուսական առաջավոր հոսանքների լայն գործունեությունը, Մազզինիի ու Գարիբալդիի գլխավորած իտալական ազգային-ազատագրական շարժումները, սուլթանական Թյուրքիայի դեմ բալկանյան ժողովուրդների և մասնավորապես սլավոնների ազատագրական շարժումները, 1877—1878 թվականների ռուս-թյուրքական պատերազմը և այլն՝ մեծ չափով խթանեցին հասարակական-քաղաքական և մտավոր-կուլտուրական այն երևույթների զարդացմանը, որոնք կապված էին հայերի, իբրև ազգության, կազմավորման պրոցեսի հետ։